



ՀԵՄՆԵՒԱԾ  
1918-ին  
Կ. ՊՈԼԻՍ



Հ.Ս.Է.Ս.

ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



2015



ՀԵՍՆՈՒԱԾ  
1918 - ԻՆ  
Կ. ՊՈԼԻՍ



Հ.Մ.Լ.Մ.

ԸՆԴՀԱՆՈՒԹ  
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



2015



Հ. Ս. Հ. Մ. Ա. Հ.  
Շուշանածաղկը  
(Տես՝ յօդուած 157, էջ 50)


Հ. Ս. Հ. Մ. Ա. Հ Նշանակը  
(Տես՝ յօդուած 157, էջ 50)



Հ. Ս. Հ. Մ. Ա. Հ Դրոշակը  
(Տես՝ յօդուած 8, էջ 12)



Հ. Ս. Հ. Մ. Ա. Հ Ակադեմական  
Դրոշակը  
(Տես՝ յօդուած 9, էջ 12)



## ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ

(ՔԱՅԼԵՐԳ Հ.Մ.Բ.Մ.Ի)

Դաշնաւորում՝ Բ. ԿԱՍԱՉԵԱՆ

Յեղինակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

Յառա՛ջ նահատակ ցեղի անմահնե՛ր,  
Վեց դարու անմոռ վրեժի զրահներ,  
Կատարն հայրենի լերանց հեռագոյն,  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հսկայ նուիրման  
Տորմի՛ղ հըրաթեւ,  
Կամատը՛ր բանակ,  
Յառա՛ջ անսասան,  
Յառաջ անդեղեւ,  
Դեպի յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
Տարագիր հայն իր կեանքը նորոգեց,  
Երեկ շղթայուած՝ այսօր ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

# ՅԱՌԱՋ ՆԱՀԱՍԱԿ

Tempo di marcia

Երաժշտութիւն Բ. ԿԱՆԱԶԵԱՆԻ  
Խօսք՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ

SOPR.

ALT.

EMOR.

BASS.

3w-nung bu-hu-quah yé-ghé wé-shah-kép  
yé-ghé wé-ghé dép húgh n-an-qéy

3w-nung bu-hu-quah yé-ghé wé-shah-kép  
yé-ghé wé-ghé dép húgh n-an-qéy

3w-nung bu-hu-quah yé-ghé wé-shah-kép  
yé-ghé wé-ghé dép húgh n-an-qéy

3w-nung bu-hu-quah yé-ghé wé-shah-kép  
yé-ghé wé-ghé dép húgh n-an-qéy

- d) yé-puh-kép húgh yé-puh-kép húgh  
- t) hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy

- d) yé-puh-kép húgh yé-puh-kép húgh  
- t) hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy

- d) yé-puh-kép húgh yé-puh-kép húgh  
- t) hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy

- d) yé-puh-kép húgh yé-puh-kép húgh  
- t) hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy hú-pn-qéy

A musical score page showing two staves of music for orchestra and choir. The top staff is for the orchestra, featuring a treble clef, a key signature of one flat, and a common time signature. It contains six measures of music with various dynamics like forte and piano, and articulations like staccato dots. The bottom staff is for the choir, featuring a bass clef, a key signature of one flat, and a common time signature. It also contains six measures of music with lyrics in German: "he-pu-pu-pu", "he-he-he-he", "he-he-he-he", "he-he-he-he", "he-he-he-he", and "he-he-he-he". The lyrics are repeated in each measure.

A musical score for the song "Jung". It consists of four staves of music, each with a different key signature and time signature. The lyrics are written below each staff, corresponding to the notes. The lyrics are: "Jung ub-er-wach ju" (Staff 1), "Jung ub-er-wach ju" (Staff 2), "Jung ub-er-wach ju" (Staff 3), and "Jung ub-er-wach ju" (Staff 4). The music includes various note values such as eighth and sixteenth notes, and rests.

Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը մշակուեցաւ եւ, յետ քուերկութեան, իր ամբողջութեան մեջ վաւերացնեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի անդրանիկ Պատգամատրական Ընդհանուր ժողովին կողմէ, որ գումարուեցաւ 11, 12 եւ 13 Շնկուեմբեր 1974ին, Պերութի մեջ, Լիբանան:

Հ.Ս.Ը.Ս.ի մօտ վաթսունամեայ պատմութեան մեջ անկիւնադարձ կազմող այս ժողովին, ուր հիմը դրուեցաւ Միութեան համագաղութային կառոյցին, կը մասնակցեին Սփիհոքի զանազան շրջաններէն ընտրուած 23 իրաւասար պատգամատրներ, եւ խորհրդակցական ձայնով իրավիրուած եղբայրներ, որոնք գոյացուցին Հ.Ս.Ը.Ս.ի Առաջին Գերագոյն ժողովը:

Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը ներշնչուած է Միութեան անգիր ոգիէն եւ ժողովը դավար սկզբունքներէն, որոնք կը կազմեն բարոյական ամրակուր վեմը երիտասարդական գաղափարապաշտ մեր կազմակերպութեան:

Պերութ, 1974

- **Առաջին բարեկողյուսում՝ 1979, Պտզմ. Բ. Հնդի. Ժողով:**
- **Երկրորդ բարեկողյուսում՝ 1983, Պտզմ. Գ. Հնդի. Ժողով:**
- **Երրորդ բարեկողյուսում՝ 1991, Պտզմ. Ե. Հնդի. Ժողով:**
- **Չորրորդ բարեկողյուսում՝ 1999, Պտզմ. Է. Հնդի. Ժողով:**
- **Հինգերորդ բարեկողյուսում՝ 2003, Պտզմ. Ը. Հնդի. Ժողով:**
- **Վեցերորդ բարեկողյուսում՝ 2007, Պտզմ. Թ. Հնդի. Ժողով:**
- **Եօրմերորդ բարեկողյուսում՝ 2011, Պտզմ. Ժ. Հնդի. Ժողով:**
- **Ութերորդ բարեկողյուսում՝ 2015, Պտզմ. ԺԱ. Հնդի. Ժողով:**

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆՈՒՆ

Սիոթիւնս կը կոչովի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Սիոթիւն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկառտներ:

## ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Սիոթեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է՝

ա) Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,

բ) Սորվեցնել Սիոթեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,

գ) Զարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատութեան եւ պատուի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,

դ) Համակել անոնց միտքն ու սիրտը մարզական ազնըլագոյն ոգինվ:

## **ՄԻԶՈՑՆԵՐ**

**Հ.Մ.Ը.Մ.ը** իր նպատակը կ'իրագործէ՝

**Ա.** Սկաուտութեամբ,

**Բ.** Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

**Գ.** Դասախոսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,

**Դ.** Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով,

**Ե.** Ակումբներով եւ մարզարաններով,

**Զ.** Երիտասարդական բաժանմունքով (18-էն 30 տարեկան):



---

# ԿԱՆՈՆԱԳԻՐ



## **ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ՅՈՒ. 1.-** Հ.Ս.Ը.Ը.ին կրնայ անդամակցիլ ամէն հայ անհատ, առանց սերի եւ դաւանանքի խտրութեան, երբ կ'ընդդունի Միութեան ծրագիր-Կանոնագիրը եւ կ'ենթարկուի անոր կամոններուն եւ որոշումներուն:

**ՅՈՒ. 2.-** Միութեան անդամակցելու տրամադիր անհատը պետք է գրաւոր դիմում կատարէ Հ.Ս.Ը.Ը.ի մասնաճիւղի մը վարչութեան՝ ըստ իր շրջանի ներքին կանոնագրութեան:

18 տարեկանէն վեր դիմորդները պարտին ունենալ նուազագոյնը երկու տարուան անդամակցութիւն ունեցող երկու Հ.Ս.Ը.Ը.ականներու երաշխաւորութիւնը:

**ՅՈՒ. 3.-** Թեկնածուն Հ.Ս.Ը.Ը.ի անդամ կը դառնայ մասնաճիւղի վարչութեան համաձայնութեամբ:

**ՅՈՒ. 4.-** Իւրաքանչիւր անդամ կը կատարէ իր բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնները հանդէպ Միութեան:

**ՅՈՒ. 5.-** Հ.Ս.Ը.Ը.ական մը չի կրնար մաս կազմել մարգական եւ սկաուտական այլ միութիւններու: Այլ խումբերու մասնակցութեան պարագան կը կարօտի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան հաւանութեան (ըստ շրջանի ներքին կանոնագրութեան):

**ՅՈՒ. 6.-** Շրջանէ շրջան, կամ մասնաճիւղէ մասնաճիւղ փոխադրուող անդամ մը պարտի ներկայացնել իր միութեական փոխանցագիրը:

Ա.- Մասնաճիւղէ մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի վարչութեան արտօնութեամբ, եւ Շրջանային Վարչութեան վաւերացումով:

Բ.- Շրջանէ շրջան անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի վարչութեան արտօնութեամբ, Շրջանային Վարչութեան վաւերացումով, եւ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

**ՅՈՒ. 7.-** Անդամ մը չի կրնար միաժամանակ մաս կազմել ստորադաս եւ գերադաս մարմիններու կամ յանձնախումբերու:

## ԴՐՈՇՎԿՆԵՐ

**ՅՈՒ. 8.-** Հ.Ս.Ը.Ս.ի դրոշակն է՝



սովորացքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

սովորացքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Հ.Ս.Ը.Ս.ի դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրելի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈՒ. 9.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկառտութեան դրոշակն է՝



սովորացքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

սովորացքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Հ.Ս.Ը.Ս.ի սկառտութեան դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## **ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԵՐ**

**ՅՈԴ. 10.-** Հ.Ս.Ը.Ը.ը ունի հետեւեալ ժողովները՝

- Ա. Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով
- Բ. Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողով
- Գ. Շրջանային Ներկայացուցչական ժողով
- Դ. Պատգամաւորական Ընդհանուր ժողով:

**ՅՈԴ. 11.-** Վերոյիշեալ ժողովներէն համապատասխան կարգով կը բխին հետեւեալ մարմինները՝

- Ա. Մասնաճիւղի Վարչութիւն
- Բ. Մեկուսի Շրջանի Վարչութիւն
- Գ. Շրջանային Վարչութիւն
- Դ. Կեդրոնական Վարչութիւն:

**ՅՈԴ. 12.-** Ժողովներու եւ վարչութիւններու որոշումները կը տրուին ճայներու պարզ մեծամասնութեամբ: Բացառութիւն կը կազմեն Կանոնագիրով նախատեսուած պարագաները (Տեսնել՝ Յօդ. 39 Ա, Յօդ. 50-ի ծանօթը, Յօդ. 92 եւ Յօդ. 134):

**ՅՈԴ. 13.-** Վարչութիւն մը լուծուած կը համարուի, եթէ իր նստաշրջանի ընթացքին կորսանցնէ իր կազմի մեծամասնութիւնը: Նման պարագայի՝ վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել զինք ընտրող ժողովը՝ առ ի տնօրինութիւն:

### **ՄԱՍՆԱՅԻԴ**

**ՅՈԴ. 14.-** Նուազագոյնը 18 տարիքը բոլորած տասնը հինգ ամիատներ հաշուող խմբաւորում մը կրնայ կազմել Հ.Ս.Ը.Ը.ի մասնաճիւղ մը: Նորաստեղծ մասնաճիւղը օրինական կը նկատուի, եթը կը ստանայ գերադաս վարչութեան վաերացումը:

**ՅՈԴ. 15.-** Իւրաքանչիւր քաղաք կ'ունենայ միայն մէկ մասնաճիւղ: Անհրաժեշտութեան պարագային Շրջանային Վարչութեան արտօնութեամբ կարելի է ստեղծել մէկէ աւելի մասնաճիւղեր:

## **ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՅՈԴ. 16.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովը (Վարչութեան գործունեութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի տարին մէկ անգամ: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական Ընդհանուր ժողովներ գումարել:

**ՅՈԴ. 17.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովներուն իրաւասու ձայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները:

**ՅՈԴ. 18.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

**Ծանօթ.-** Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, Անդամական Ընդհանուր երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վաշութիւնը պարտաւոր է բոլոր անդամները տեղեակ պահել Անդամական Ընդհանուր ժողովի գումարումն եւ անհրաժեշտ պարագային յետաձգումն:

**ՅՈԴ. 19.-** Անդամական Ընդհանուր ժողովը, որուն հաշետու է մասնաճիւղին վարչութիւնը՝

Ա. Կը գնահատէ մասնաճիւղի վարչութեան տեղեկագրով ներկայացուած բարոյական եւ նիւթական գործունեութիւնը:

Բ. Կու տայ որոշումներ եւ կ'ընէ թելադրանքներ մասնաճիւղի գործունեութեան շուրջ:

Գ. Կ'ընտրէ մասնաճիւղի վարչութիւն:

Դ. Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ կամոնագրի սահմանած թիւով ներկայացուցիչներ՝ Շրջանային Ներկայացուցչական ժողովին համար, ինչպէս նաև կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ ներկայացուցիչներ առանձին քուէարկութեամբ:

Ե. Կ'ընտրէ հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբ:

## ՇՐՋԱՆ

**ՅՈԴ. 20.-** Շրջան կը համարուի այն նահանգը կամ նահանգները, երկիրը կամ երկիրները, որոնք ունին առնուազն 3 մասնաճիւղեր, եւ որոնք միասնաբար կը հաշուեն նուազգոյնը 250 անդամ:

**ՅՈԴ. 21.-** Շրջանը կը գործէ Ներքին Կանոնագրութեամբ:

**ՅՈԴ. 22.-** Շրջանը կը ղեկավարուի Շրջանային Վարչութեամբ, ընտրուած Շրջանային Ներկայացուցչական ժողովն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈԴ. 23.-** Այն շրջանը, ուր Շրջանային Վարչութիւն գոյութիւն չունի, կը կոչուի Մեկուսի Շրջան:

**ՅՈԴ. 24.-** Մեկուսի Շրջանը կը ղեկավարուի Մեկուսի Շրջանի Վարչութեամբ, ընտրուած Մեկուսի Շրջանի Անդամական ժողովն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**ՅՈԴ. 25.-** Մեկուսի Շրջանի Անդամական ժողովը Մեկուսի Շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի մէկ կամ երկու տարին անգամ մը:

**Ծանօթ 1.-** Մեկուսի Շրջանները, ժողովի թուականէն նուազագոյնը մէկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

**Ծանօթ 2.-** Մեկուսի շրջանը կը գումարէ յատուկ Անդամական ժողով այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութեան կը ստանայ Պատգամաւորական ժողովի օրակարգը:

**ՅՈԴ. 26.-** Մեկուսի Անդամական ժողովը (Վարչութեան գործունեութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի երկու տարին մէկ անգամ: Անիրաժեշտ առիթներով կարելի է Անդամական ժողովներ գումարել:

**ՅՈՒ. 27.-** Մեկուսի Անդամական ժողովներուն իրաւասու ծայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը եւ Վարչութեան ներկայացուցիչը:

**ՅՈՒ. 28.-** Մեկուսի Անդամական ժողովները օրինաւոր կը նկատուիմ, երբ իրաւասու ծայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

**Ծանօթ՝** Մեծամասնութիւն չփյանայու պարագային, երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները նախապէս տեղեակ պահել Անդամական ժողովի գումարումն եւ անհրաժեշտ պարագային յետաձգումն:

**ՅՈՒ. 29.-** Մեկուսի Շրջանի Անդամական ժողովը՝  
Ա.- Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Վարչութեան գործունեութիւնը:

Բ.- Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունեութեան ուղեգիծը:

Գ.- Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:

Դ.- Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի Ներքին Կանոնագիրը:

Ե.- Կը պատրաստէ Վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ անդամական ցենզը:

Զ.- Կ'ընտրէ Մեկուսի Վարչութիւն:  
Է.- Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ Կանոնագիրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 1 փոխ պատգանաւոր առանձին քուէարկութեամբ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**ՅՈՒ 30-** Շրջանային ներկայացուցչական ժողովը շրջանի մը գերազոյն ժողովն է, որ կը գումարուի երկու տարին անգամ մը:

**Ծանօթ 1.-** Շրջանները, ժողովի բուլականեն նուազագոյնը մեկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

**Ծանօթ 2.-** Շրջանը կը գումարէ յատուկ Շրջանային Ներկայացուցչական ժողով, այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութենէն կը ստանայ Պատգամաւորական ժողովի օրակարգը:

**Ծանօթ 3.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովի մը, որուն քննելի օրակարգը ճշդուած է, չի կրնան ինքնիրեն իրաւունք տալ այլ օրակարգի մը քննութեան համար իր ժամանակը երկարաձգել:

**ՅՈԴ. 31.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է նաև նամաճիւղերու պարզ մեծամասնութիւնը, եւ նաեւ ծայնի իրաւունք ունեցող ներկայացուցիչներու՝ պարզ մեծամասնութիւնը:

**ՅՈԴ. 32.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին իրաւասու ծայնով կը նաև նամակցին՝

Ա. Մասնաճիւղերու ընտրուած ներկայացուցիչները:

Բ. Մասնաճիւղերու վարչութիւններէն մեկական ներկայացուցիչ:

Գ. Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը:

Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

**ՅՈԴ. 33.-** Մասնաճիւղերու ընտրելի ներկայացուցիչներուն թիւը կը ճշդուի հետեւեալ ձեռով՝

Ա. Մինչեւ 25 անդամ ունեցող մասնաճիւղ մը՝

1 ներկայացուցիչ

Բ. 026-0050 անդամ ունեցողը՝ 2 ներկայացուցիչ

Գ. 051-0075 անդամ ունեցողը՝ 3 ներկայացուցիչ

Դ. 076-0100 անդամ ունեցողը՝ 4 ներկայացուցիչ

Ե. 101-0150 անդամ ունեցողը՝ 5 ներկայացուցիչ

Զ. 151-0200 անդամ ունեցողը՝ 6 ներկայացուցիչ

Է. 201-0500 անդամ ունեցողը՝ 7 ներկայացուցիչ

Ը. 501-0800 անդամ ունեցողը՝ 8 ներկայացուցիչ

Թ. 801-1200 անդամ ունեցողը՝ 9 ներկայացուցիչ

Ժ. 1200էն ետք իրաքանչիւր 500 անդամի՝

1 ներկայացուցիչ

**ՅՈՒ. 34.-** Մասնածիւղի մը, Շրջանային Ներկայացուցչական ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

**ՅՈՒ. 35.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

Ա. Շրջանային Վարչութեան մնացեալ անդամները:

Բ. Շրջանային Խորհրդակցութեան եւ Շրջանային Յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչը:

Գ. Շրջանային ընդիհանուր խմբապետ/խմբապետուիհին:

Դ. Շրջանային խմբապետն ու խմբապետուիհին:

**ՅՈՒ. 36.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, հրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ չորրորդ համեմատութեամբ: Յրաւիրեալներուն կէսը կ'ընտրուի Շրջանային Ներկայացուցչական ժողովին կողմէ եւ մնացեալ կէսը կը հրաւիրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**ՅՈՒ. 37.-** Անհրաժեշտ պարագային, կրնայ արտակարգ Շրջանային ժողով գումարուիլ Կեդրոնական Վարչութեան կամ Շրջանային Վարչութեան հրաւերով եւ կամ մասնածիւղերու Վարչութիւններու առաջարկով:

**Ծանօթ.-** Վերջինի պարագային, երբ Վարչութիւն մը պատճառաբանած ծեւով արտակարգ Շրջանային ժողովի առաջարկ ներկայացնէ, Շրջանային Վարչութիւնը պարտաւոր է այս առաջարկը փոխանցել ֆիւս մասնածիւղերու Վարչութիւններուն առնելու համար անոնց կարծիքը: Երբ մասնածիւղերու Վարչութիւններու 2/3 համեմատութիւնը համաձայն գտնուի առաջարկին, Շրջանային Վարչութիւնը պարտի արտակարգ Շրջանային Ներկայացուցչական ժողով գումարել:

**ՅՈՒ. 38.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը՝

Ա. Կը լսէ մասնածիւղերու Վարչութիւններու երկամեայ գործունեութեանց միացեալ եւ ամփոփ նիւթաբարոյական տեղեկագիրը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Շրջանային Վարչութեան գործունեութիւնը:

**Գ.** Կը ծշդէ յառաջիկայ շրջանի գործունեութեան ուղեգիծը:

**Դ.** Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:

**Ե.** Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի Ներքին Կանոնագիրը:

**Զ.** Կը պատրաստէ Շրջանային Վարչութեան նախահաշիւր եւ կ'որոշէ մասնածիւղերու ցենզը:

**Է.** Կ'ընտրէ Շրջանային Վարչութիւն:

**Ը.** Ի պահանջեալ հարկին՝ կ'ընտրէ Կանոնագրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին համար, ինչպէս նաև կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ պատգամաւորներ առանձին քուէարկութեամբ:

**ՅՈՒ. 39.-** Ներքին Կանոնագիրի վերաբերող Յօդուածներու՝

**Ա.** Քուէարկութիւնը կը կատարուի իրաւասու ձայներում՝ ներկաներուն ձայներու երկու երրորդ մեծամասնութեամբ:

**Բ.** Բարեփոխութիւնները ի օրու կը դառնան Կեղրոնական Վարչութեան վաւերացումէն ետք միայն:

**ՅՈՒ. 40.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը կրնայ իհմնական փոփոխութիւններ մտցնել Ներքին Կանոնագրին մէջ, պայմանով որ փոփոխութեան առաջարկները առնուազն մէկ ամիս առաջ յանձնըւած ըլլան բոլոր մասնածիւղերուն եւ Անդամական Ընդհանուր ժողովներու քննութեան:

## ՊԱՏԳԱՄԱՒՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**ՅՈՒ. 41.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովը Հ.Ս.-Ը.Ս.ի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են Հ.Ս.Ը.Ս.ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն: Կը գումարուի չորս տարին անգամ մը:

**ՅՈՂ. 42.-** Պատգամատորական Ընդհանուր ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

Ա. Շրջաններու ընտրուած պատգամատորները (Տեսմել Յօդ. 45),

Բ. Մեկուսի շրջաններու ընտրուած պատգամատորները (Տեսմել Յօդ. 45),

Գ. Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ,

Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

**Ծանօթ՝** Մեկուսի Շրջան մը եթէ հարիւրէ նուազ անդամ ունի կ'ունեայ մէկ ներկայացուցիչ, որ կ'ընտրուի Անդամական Ընդհանուր ժողովէն:

**ՅՈՂ. 43.-** Պատգամատորական Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

Ա. Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները,

Բ. Կեդրոնական Վարչութեան կողմէ քառամեայ շրջանի մը համար նշանակուած յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:

**ՅՈՂ. 44.-** Պատգամատորական Ընդհանուր ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդ համեմատութեամբ: Յրաւիրեալները կը նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ իիմնուելով շրջաններէ եւ մեկուսի շըրջաններէ ներկայացուած առաջարկներուն վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու թիւին մէկ չորրորդը իր կողմէ նշանակել:

**ՅՈՂ. 45.-** Պատգամատորական Ընդհանուր ժողովին մասնակցող պատգամատորներու թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով՝

Ա. 100-0250 անդամ՝

1 պատգամատոր

Բ. 251-0500 անդամ՝

2 պատգամատոր

Գ. 501-0750 անդամ՝

3 պատգամատոր

Դ. 751-1000 անդամ՝

4 պատգամաւոր

Ե. Յաւելեալ իրաքանչիւր հազար անդամի համար՝ մէկ պատգամաւոր: Վերջին 500 անդամէն աւելին կ'ինայ հազարի իրաւունքին մէջ:

**ՅՈՒ. 46.-** Շրջանի մը Պատգամաւորական Ընդհանուր ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

**ՅՈՒ. 47.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կը մասնակցիմ՝

Ա. Շրջանները իրենց շրջանի պատգամաւորներով, որոնք պարտին ունենալ լիազօրագիրներ՝ վաւերացուած գիրենք ընտրող ժողովին դիւանին կողմէ:

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեան ներկայացուցիչը պարտի ունենալ լիազօրագիր, որ վաւերացուած ըլլայ համապատասխան վարչութեան դիւանին կողմէ:

**ՅՈՒ. 48.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովին պատգամաւոր կրնայ ընտրուիլ առնուազն տասը տարի անընդմէջ Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած անդամ մը:

**ՅՈՒ. 49.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է Շրջաններու եւ իրաւասու ձայնով պատգամաւորներու պարզ մեծամասնութիւնը:

**ՅՈՒ. 50.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովը՝

Ա. Կը լսէ Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեանց քառամեայ գործունեութեանց ամփոփ տեղեկագրերը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան բարոյական եւ նիւթական գործունեութիւնը:

Գ. Կը ծշդէ Միութեան յառաջիկայ շրջանի ընդհանուր գործունեութեան ուղեգիծը:

Դ. Կը կազմէ Կեդրոնական Վարչութեան պիտօնի նախահաշիւը եւ կը կատարէ շրջաններու ցենզի բաշխումը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը:

Զ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանի մը մէջ առկախ մնացած հարցերը:

Է. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն:

**Ծանօթ.-** Կանոնագիրի վերաբերեալ յօդուածներու քուեարկութիւնը կը կատարուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՈՒ. 51.-** Պատգամաւորական Ընդհանուր ժողովը կը բայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրին մէջ, պայմանով, որ փոփոխութեան առաջարկները առնուազն չորս ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութիւններուն եւ ժողովներու քննութեան՝ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

**ՅՈՒ. 52.-** Բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ՝

Ա. Կեդրոնական Վարչութեան պահանջով,

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի առաջարկով:

**Ծանօթ.-** Երկրորդ պարագային, Շրջանային կամ Մեկուսի Շրջանի Վարչութիւն մը, Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու իր հիմնաւորեալ առաջարկը վաւերացնել տալէ ետք Շրջանային Ներկայացուցական կամ Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ, զայն կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան, որ իր կարգին՝ այս առաջարկը իր նկատողութիւններով կը յդէ Շրջաններուն եւ Մեկուսի Շրջաններուն առնելու համար անոնց տեսակէտը այս նասին: Ունենալէ ետք բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի գրաւոր հաւաճութիւնը՝ բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու մասին, Կեդրոնական Վարչութիւնը կը իրաւորէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի:

## ՄԱՍՆԱՅԻԴՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅՈՒ. 53.-** Իրաքանչիւր մասնաճիւղ կ'ունենայ իր մաս-

Անաձիւղի Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամ-ներէ: Կ'ընտրուի Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ, մէկ տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ծայներու պարզ մեծամասնութեամբ:

**ՅՈՒ. 54.-** Մասնաճիւղի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Հ.Ս.Ը.Ս.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

**ՅՈՒ. 55.-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Շրջանային Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՈՒ. 56.-** Մասնաճիւղի Վարչութեան կազմը կը վաւերացուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**ՅՈՒ. 57.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կը վարէ մասնաճիւղի մը միութենական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ու Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովներու սահմանին մէջ:

**ՅՈՒ. 58.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ յանձնախումբերու եւ ժողովներու գործունեութեանց:

**ՅՈՒ. 59.-** Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոնար, զորս իր գործունեութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին, որուն առջեւ պատասխանատու է հաւաքարար:

**ՅՈԴ. 60.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Շրջանային Վարչութեան կը դրկէ՝

Ա.Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ընդհանուր ժողովին ատենագրութիւնները:

Բ.Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունեութեան տեղեկագիր:

**ՅՈԴ. 61.-** Մասնաճիւղի Վարչութեան անդամ մը, պատելի արարքի մը համար, Մասնաճիւղի Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Շրջանային Վարչութեան՝ առ ի տնօրինում:

**ՅՈԴ. 62.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, որ կը պատրաստուի ու կը տրամադրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

### **ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Յօդ. 63.-** Իւրաքանչիւր Մեկուսի Շրջան կ'ունենայ իր Մեկուսի Շրջանի Վարչութիւնը բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Մեկուսի շրջանի Անդամական ժողովին կողմէ, մէկ կամ երկու տարուան համար, գաղտնի քուէրկութեամբ եւ ձայններու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 64.-** Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

**Յօդ. 65.-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեղրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**Յօդ. 66.-** Մեկուսի Շրջանի վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**Յօդ. 67.-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը վարէ իր շըրջանի միութենական գործերը՝ ընդհանուր եւ ներքին կանոնագիրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Մեկուսի Շրջանի Անդամական ժողովներու որոշումներու սահմանին մէջ:

**Յօդ. 68.-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթական յանձնախումբներու եւ ժողովներու գործունեութեանց:

**Յօդ. 69.-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունեութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մեկուսի Շրջանի Անդամական ժողովին, որուն պատասխանատու է հաւաքարար:

**Յօդ. 70.-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը ղրկէ՝

Ա.- Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական ժողովին ատենագրութիւնները:

Բ.- Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունեութեան տեղեկագիր:

**Յօդ. 71.-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, մակագիր թուղթն ու պահարանը:

**Յօդ. 72.-** Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ մը պատժելի արարքի մը համար, վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

**Յօդ. 73.-** Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւնները կըր-նան մարզական եւ սկառտական միջ-շրջանային հանդի-պումներ կազմակերպել Կեղրոնական Վարչութեան հա-ւանութեամբ:

**Յօդ. 74.-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւննը պարտաւոր են Կեղրոնական Վարչութեան վճարել Պատ-գանաւորական ընդհանուր ժողովին կողմէ որոշուած ցեն-զը, ամէն տարի կանոնաւորաբար:

### **ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 75.-** Իւրաքանչիւր Շրջան կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ըն-տըրուիլ Շրջանային Ներկայացուցչական ժողովին կողմէ, երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայ-ներու պարզ մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 76.-** Շրջանային Վարչութեան անդամ կրնայ ըն-տըրուիլ հինգ տարուան Հ.Ս.Ը.Ա.կան մը, որ նախապէս նուազագոյնը երկու տարի մաս կազմած է մասնաճիւղի մը վարչութեան, շրջանային խորհուրդներու կամ յանձնա-խումբներու:

**ՅՕԴ. 77.-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Շրջանային Վարչութիւնը կ'ամ-բողջացնէ իր կազմը՝ Կեղրոնական Վարչութեան հաւանու-թեամբ:

**ՅՕԴ. 78.-** Շրջանային Վարչութեան անդամ մը կրնայ ըն-տըրուիլ երկու յաջորդական շրջաններու համար. ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**ՅՕԴ. 79.-** Շրջանային Վարչութեան կազմը կը վաւերաց-ուիլ Կեղրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈՒ. 80.-** Շրջանային Վարչութիւնը կը վարէ շրջանի մը միութենական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Շրջանային Ներկայացուցչական ժողովներու որոշումներու սահմանին մէջ: Յետամուտ կ'ըլլայ կազմելու նոր մասնա- ճիւղեր:

**ՅՈՒ. 81.-** Շրջանային Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթա- կայ մարմիններու յանձնախումբերու եւ ժողովներու գոր- ծունելութեանց:

**ՅՈՒ. 82.-** Շրջանային Վարչութիւնը պարտի ունենալ ժո- ղովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրու- թեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուա- կան տոնար, զորս իր գործունեութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Շրջանային Ներկայացուցչական ժողովին, որուն պատասխանատու է հաւաքաբար:

**ՅՈՒ. 83.-** Շրջանային Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը դրկէ՝

Ա.Վարչութեան ժողովներու նիստերու եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովին ատենագրութիւնները:

Բ.Մասնաճիւղերուն յղած շրջաբերականները:

Գ.Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունեու- թեան եւ շրջանի մասին տեղեկագրի:

**ՅՈՒ. 84.-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է իր անու- նով լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու իր մասնաճիւ- ղերու վարչութեանց նիւթական եւ բարոյական գործունեու- թիւնը քննելու, ներքին հարցերը լուծելու եւ ուղղութիւն տալու համար:

**ՅՈՒ. 85.-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է մասնա- ճիւղի վարչական կազմ մը լուծելու նիւթական սայթաքում- ներու, անգործունեութեան, որոշում-հրահանգներու հան-

դէա անտարբերութեան եւ մասնաճիւղի ներքին կեանքին մէջ ստեղծուած դժգոհութեանց պատճառով:

Նման պարագաներու, Շրջանային Վարչութիւնը անմիշապէս կը նշանակէ վարչական կազմ, որուն առաջնահերթ պարտականութիւնը կ'ըլլայ առաւելագոյնը մինչեւ երեք ամիս յառաջացնել մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով:

**ՅՈՒ. 86.-** Բացառիկ պարագաներու՝ Շրջանային Վարչութիւնը իրաւասու է նշանակովի վարչութիւն յառաջացնել մասնաճիւղի մը մէջ:

**ՅՈՒ. 87.-** Շրջանային Վարչութիւնը կրնայ ունէ անդամ մը նշանակել իրեն Ենթակայ յանձնախունքի մը մէջ՝ Ենթակային պատկանած մասնաճիւղի վարչութեան հետ խորհրդակցաբար:

**ՅՈՒ. 88.-** Շրջանային Վարչութիւն մը կրնայ գործակար ունենալ Շրջանային Ներկայացուցչական ժողովի որոշումով:

**ՅՈՒ. 89.-** Միայն Շրջանային Վարչութիւնը կրնայ իր շըրջանին մէջ միջ-մասնաճիւղային ծեռնարկներ, հանդիպումներ եւ սկաուտական բանակումներ կազմակերպել:

Պարագաներու բերումով այդ պարտականութիւնը կըրնայ յանձնել մասնաճիւղի մը:

**ՅՈՒ. 90.-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՈՒ. 91.-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւնները պարտաւոր են Կեդրոնական Վարչութեան վճարել Պատգամատրական Ընդհանուր ժողովին կողմէ որոշուած ցենզը, ամէն տարի կանոնաւորաբար:

**ՅՈԴ. 92.-** Շրջանային Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Շրջանային Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅՈԴ. 93.-** Հ.Ս.Ը.Ս.ի գործադիր գերագոյն մարմինն է Հ.-Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը:

**ՅՈԴ. 94.-** Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կազմէ, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ: Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9, 11 կամ 13 անդամներէ եւ կ'ընտրուի չորս տարուան համար:

**ՅՈԴ. 95.-** Կեդրոնական Վարչութիւնը իր կազմէն որեւէ պատճառով պակսող անդամին տեղ իր կազմը կ'ամբողջացնէ:

**ՅՈԴ. 96.-** Կեդրոնական Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար, ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**ՅՈԴ. 97.-** Կեդրոնական Վարչութեան անդամ կրնայ ընտըրուիլ առնուազն 10 տարուան Հ.Ս.Ը.Ս.ական մը, որ շրջանի մը Շրջանային Վարչութեան անդամ կամ Շրջանային Վարչութեան մակարդակի յանձնախումբի մէջ եղած է կամ վարած՝ համապատասխան պաշտօն:

**ՅՈԴ. 98.-** Կեդրոնական Վարչութեան կը պատկանի Հ.Ս.-Ը.Ս.ի Ծրագիրի, կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը:

**ՅՈԴ. 99.-** Կեդրոնական Վարչութիւնը կը գործադրէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումները եւ կը հսկէ անոնց գործադրութեամ՝ շրջաններէն ներս:

**ՅՈԴ. 100.-** Կեդրոնական Վարչութիւնը կը հսկէ, որ Շրջանային Ներկայացուցչական ժողովներու որոշումները եւ Շրջանային Վարչութեանց գործունեութիւնը չհակասեն **Միութեան ծրագիր-Կանոնագիրին** եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումներուն:

**ՅՈԴ. 101.-** Շրջաններու պահանջով, կամ անհրաժեշտ պարագային իր որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը միութենական գործերուն համար կրնայ ներկայացուցիչներ որկել շրջանները, որոշ պարտականութեամբ:

**ՅՈԴ. 102.-** Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է պահել ատենագրութեան, նամակագրութեան, շրջաբերականներու եւ հաշուական համապատասխան թղթաձրարներ, զորս իր գործունեութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին եւ որուն պատասխանատու է հաւաքարար:

**ՅՈԴ. 103.-** Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ կազմակերպել համա-Հ.Ս.Ը.Մ.ական հանդիպումներ, սկաուտական բանակումներ եւ մարզական խաղեր, հաւաքատեղիի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան գործակցութեամբ:

**ՅՈԴ. 104.-** Կեդրոնական Վարչութիւնը կրնայ ոեւէ անդամ մը նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան հետ խորհրդակցարար:

**ՅՈԴ. 105.-** Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեակի աւարտին կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր ժողով, որուն գումարումի թուականէն վեց ամիս առաջ Շրջա-

նային եւ Մեկուսի Վարչութիւններուն կը դրկէ ժողովի օրակարգը:

**ՅՈԴ. 106.-** Բացառիկ պարագաներու՝ Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է լուծելու Շրջանի Վարչական կազմ եւ անոր տեղ նորը նշանակելու:

Նշանակուած Վարչութիւնը մինչեւ վեց ամիս պարտաւոր է իրաւիրելու Շրջանային Ներկայացուցչական կամ Անդամական Ընդհանուր ժողով, ընտրելու համար նոր Վարչութիւն:

## ԵՆԴՀԱՆՈՒԹ ԿԱՆՈՆՆԵՐ

**ՅՈԴ. 107.-** Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ կ'ունենան իրենց ներքին կանոնագիրը, համաձայն շրջանի պայմաններուն, հաստատուած համապատասխան ժողովներու ընթացքին, եւ վաւերացուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈԴ. 108.-** Հ.Ս.Ը.Ս.ը ունի իր «Ծառայութեան» եւ «Արժանեաց» շքանշաններ, ինչպէս նաև՝ «Արտակարգ» պատուանշանը, որոնք ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները:

**ՅՈԴ. 109.-** Հ.Ս.Ը.Ս.ի մարզիկները իրենց մարզական բոլոր տարագններուն վրայ պարտին կրել Հ.Ս.Ը.Ս.ի **Վահանը**՝ գետեղուած ծախս կուրծքին վրայ:

**ՅՈԴ. 110.-** Վարչական մը, չի կրնան նիւթական վարձատրութիւն ստանալ, այլապէս կը դադրի իր հանգամանքն:

**ՅՈԴ. 111.-** Այս Կանոնագրութեան եւ կազմակերպական կանոններու մեկնաբանութեան իրաւունքը կը պատկանի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան:

**ՅՈԴ. 112.-** Շրջաններու Ներքին Կանոնագրութիւնը մեկնաբանելու իրաւունքը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

**ՅՈԴ. 113.-** Այս կանոնագրութեան վերաբերեալ որեւէ փոփոխութիւն կատարելու իրաւունքը կը պատկանի Հ.Ս.Ը.Ս.ի Պատգամաւորական Ընդհանուր ժողովին:

## ԵՆՏՐԱՎԱՆ

**ՅՈԴ. 114.-** Տասնութ տարիքը լրացուցած եւ առնուազն վեց ամիս Հ.Ս.Ը.Ս.ի շարքերուն անդամակցած բոլոր Հ.Ս.Ը.Ս.ականները իրաւունք ունին քուէարկելու:

**ՅՈԴ. 115.-** Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէարկութեամբ:

Քուէներու ընդհանուր թիւն կը գեղչուին ճերմակ քուէները եւ մնացեալին կէսէն աւելին ստացողը ընտրուած կը համարուի, պայմանով որ ճերմակ քուէներուն թիւը ընտրելու իրաւունք ունեցողներու թիւի կէսէն աւելի չըլլայ:

## ՆԻՒԹԱՎԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

**ՅՈԴ. 116.-** Միութեան հասոյթի միջոցներն են. անդամավըճարներ, մուտքի տուրքեր, միութենական հանդէսներն եւ մրցումների գոյացած գումարներ, նուէրներ, հանգանակութիւններ, կտակներ եւ մնայուն հասոյթի աղբիւրներ:

**ՅՈԴ. 117.-** Վարչութեան մը արտօնուած չէ Միութեան գանձը առեւտրական շահարկումի ենթարկել: Բացառութիւն կարելի է կատարել գերադաս վարչութեան եւ գերադաս ժողովի հաւանութեամբ:

**ՅՈՂ. 118.-** Մասնաճիւղ մը քոյր մասնաճիւղի մը սահմանին մէջ որեւէ հասութաբեր ձեռնարկի համար պարտաւոր է Շրջանային Վարչութեան եւ տեղական վարչութեան հաւանութիւնը առնել:

**ՅՈՂ. 119.-** Վարչութիւնները Միութենէն դուրս որեւէ ձեռնարկի չեն կրնար յատկացումներ ընել իրենց գանձէն: Բացառիկ պարագաներու գերադաս մարմինի հաւանութիւնը ստանալ անհրաժեշտ է:

**ՅՈՂ. 120.-** Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն որեւէ փոխատուութիւն ընել ունել անհատի (անդամ կամ ոչ), ինչպէս նաեւ որեւէ կազմակերպութեան: Այլ տեսակի փոխատուութիւններ կը կարօտին գերադաս Վարչութիւններու հաւանութեան:

**ՅՈՂ. 121.-** Վարչութիւնները փոխառութիւն կրնան ընել եւ կամ կալուածներ գրաւի տակ կրնան դնել միայն գերադաս մարմինի հաւանութեամբ:

## ՀԱՇՈՒԱԿԱՆ

**ՅՈՂ. 122.-** Ամէն մարմին պարտաւոր է ստացած գումարին համար տալ համապատասխան կնքուած ընկալագիր՝ գանձապահին ստորագրութեամբ:

**ՅՈՂ. 123.-** Բոլոր վարչութիւնները պարտաւոր են իրենց հաշիւնները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահութեամբ:

**ՅՈՂ. 124.-** Արգիլուած է որեւէ հիմնադրամ գործածել տարբեր նպատակի:

## **ՄԱՐԶԱԿԱՆ**

**ՅՈԴ.** 125.- Մարզական խաղերը կ'ունենան իրենց յատուկ Ներքին Կանոնագրութիւնը, որ պէտք է վաւերացուած ըլլայ համապատասխան Վարչութեան կողմէ:

### **ԳՈՅՔԵՐ ԵՒ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ**

**ՅՈԴ. 126.**- Իւրաքանչիւր Վարչութիւն պարտաւոր է ունենալ գոյքերու կանոնաւոր տոմար, ուր թուագրեալ նշանակուած պէտք է ըլլան մասնածիւղի գոյքերը, համապատասխան մանրամասնութիւններով:

**ՅՈԴ. 127.**- Իւրաքանչիւր շրջանի անշարժ կալուածները (դաշտ, մարզարան, ակումբ, եւայլն), Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, պետութեան մօտ կ'արձանագրուին Շրջանի Յ.Ս.Ը.Մ.ի անունով: Բացառիկ պարագաներու կը յանձնուին Կեդրոնական Վարչութեան կարգադրութեան:

**ՅՈԴ. 128.**- Կալուածները կրնան ծախուիլ համապատասխան ժողովներու որոշումով եւ գերադաս Վարչութիւններու վաւերացումով:

**ՅՈԴ. 129.**- Մասնածիւղ մը լուծուելու պարագային՝ անշարժ եւ շարժուն կալուածները եւ իրաւունքները կը փոխանցուին համապատասխան գերադաս Վարչութեան:

### **ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ**

**ՅՈԴ. 130.**- Յակակարգապահական արարքի մէջ կը նկատուի անդամ մը երբ՝

Ա. Կազմակերպական կանոններու եւ Պատգամատրական Ընդհանուր ժողովներու որոշումներուն դէմ կը մեղանչէ:

Բ. Շրջանային Վարչութեան կամ Մասնաճիւղի Վարչութեան որոշումներուն չ'ենթարկուիր:

Գ. Անդամատուրք չի վճարեր:

Դ. Ժողովներէ կը բացակայի:

Ե. Մարմիններու պաշտօնավարութեան շրջանին, անոնց դէմ պայքար կը մղէ:

Զ. Հարցի մը, հակականոնագրային ծետվ ընթացք տալու համար, հանրագրութիւններ կը կազմէ:

Է. Գոյք կամ դրամ կ'իւրացնէ:

**ԾՈՂ. 130.-** Միութեան պատիժներն են՝

Ա. Նկատողութիւն, դիտողութիւն

Բ. Յանդիմանութիւն

Գ. Քուէարկելու իրաւունք գրկում

Դ. Ընտրելու եւ ընտրուելու իրաւունք գրկում

Ե. Կախակայում

Զ. Յեռացում

Է. Արտաքսում:

**ԾՈՂ. 131.-** Կարգապահական տեսակէտով ամէն անդամ պատասխանատու է այն Վարչութեան, որուն իրաւասութեանց դէմ յանցանք գործած է:

**ԾՈՂ. 132.-** Մարմիններն ու ժողովները իրենց ենթակայ անդամներուն մասին կարգապահական պատիժներ տնօրինելու պարագային, պարտաւոր են պաշտպանուելու հնարաւորութիւն տալ ենթակային:

**ԾՈՂ. 133.-** Պատժական ամէն որոշում կը տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՈՒ. 135.-** Մարմիններու եւ ժողովներու պատժական որոշումները վերջնական են, եթէ բողոք չկայ անոնց դէմ: Բողոքել կարելի է անմիջականօրէն գերադաս Վարչութեան: Բողոքառու ժողովներու եւ մարմիններու որոշումները վերջնական են:

#### **Ծանօթ՝**

Ա. Դատավճիքի մը դէմ բողոքողը կը գրկուի իր դատը գերադաս ժողովին եւ կամ մարմինն ներկայացնելու իրաւունքն, եթէ իր բողոքը հրապարակուած է մամուլի միջոցով կամ հանրային բեմեր:

Բ. Բողոքը գրաւոր կը ներկայացնի պատիժ որոշող մարմինն կամ ժողովին միջոցով:

Գ. Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ծայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՈՒ. 136.-** Կարգապահական պատիժներու դէմ բողոքել կարելի է մինչեւ երկու ամիս, հաշուելով որոշումը հաղորդբւած բուլականէն: Բողոքառու մարմինը կամ ժողովը հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեանի:

**ՅՈՒ. 137.-** Հ.Ս.Ը.Ս.էն հեռացման որոշում կը տրուի Շըրջանային Վարչութեան կողմէ, եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**ՅՈՒ. 138.-** Հ.Ս.Ը.Ս.էն արտաքսման որոշում կը տրուի եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**ՅՈՒ. 139.-** Ժողովներէ յաճախ բացակայող անդամ մը կը ստանայ նկատողութիւն, իսկ կրկնութեանց պարագային յանդինանութիւն:

**ՅՈՒ. 140.-** Մէկ տարի անդամատուրք չվճարող անդամ մը կը գրկուի ընտրելու եւ ընտրուելու իրաւունքն: Յաջորդական երեք տարիներ անդամատուրք չվճարող անդամ մը դադրած կը նկատուի Միութեան շարքերէն:

**ՅՈՒ. 141.-** Կազմակերպական կանոններու դէմ մեղանչ չողները, վարչական կարգադրութեանց դէմ անսաստողները, հակաօրինական կերպով քննադատողները, հաճրագրութիւն կազմողները՝ մարմինին կամ ժողովներու կողմէ կը կախակայուին:

**Ծանօթ՝**

Ա. Կախակայուած անդամ մը ժամանակաւոր կերպով կը դադրի Միութեան անդամ ըլլալէ, չի կրնար մաս կազմել մարմինի մը Եւ մասնակցիլ Ընդհանուր ժողովներու:

Բ. Կախակայումը առաւելագոյն մէկ տարուան շրջանի համար կ'ըլլայ:

Գ. Կախակայման շրջանը լրանալուն՝ Ենթական կը վերստանայ Միութեան անդամի իր բոլոր իրաւունքները:

**ՅՈՒ. 142.-** Կախակայուած անդամներ գերծ չեն կացուց-ուիր իրենց նիւթական պարտաւորութիւններէն:

**ՅՈՒ. 143.-** Միութեան գաղափարական ուղղութեան դէմ գործողները, կարգապահական յանցանքներու համար յա-ճախակի պատիժ ստացողները, Միութեան գոյքը Եւ դրանը իրացնողները Միութենէն կը հեռացուին, իսկ ծայրայեղ պարագաներու՝ կ'արտաքսուին:

**Ծանօթ՝** Հեռացուած անդամ մը հեռացման թուականէն երկու տարի յետոյ կրնայ գրաւոր դիմում կատարել զինք հեռացնող մարմինին կամ ժողովին: Վերընդունման իրաւունքը կը պատկանի հեռացման որոշումը տնօրինող մարմինին կամ ժողովին:





ԱՎԱՐՔԱԿԱՆ



# ԾՐԱԳԻՐ

## ԱՆՈՒՆ

Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը անրաժան մասն է Սիութեան ընդհանուր կառոյցին եւ անոր անդամները կը կոչուին Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտներ:

Ծանօթ.- Այս կանոնագիրին մէջ ՍԿԱՈՒՏ բառը կը վերաբերի հաւասարավէս տղոց եւ աղջկանց բաժիններուն:

## ՆՊԱՏԱԿ

Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան նպատակն է՝

Ա. Պատրաստել ամուր նկարագրի եւ քարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատար եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգումներու իրազործումին:

Բ. Պատրաստել առողջ, շարքաշ ու արի անհատներ:

Գ. Զօրացնել իրենց մտային կարողութիւնները:

Դ. Զարգացնել իրենց մէջ պարտականութեան, պատասխանատութեան եւ պատուի զգացումները, ինչպէս նաև՝ վեհանձնութեան եւ զոհողութեան ոգին:

Ե. Արքնցնել համազործակցութեան, ծառայասիրութեան, ընկերասիրութեան ոգին, պատրաստելով տիպար քաղաքացիներ:

## **ՄԻԶՈՑՆԵՐ**

-Հ.Մ.Ը.Ը կը կազմէ սկաուտական խումբեր հայրենիքի եւ գաղութներու մէջ՝ իրագործելու համար իր սկաուտութեան նպատակները:

- Սկաուտներու ազգային, քաղաքացիական, ընկերային, սկաուտական դաստիարակութեան եւ որակաւոր ու կարող աստիճանաւորներու պատրաստութեան համար կը կազմակերպի դասախոսութիւններ, դպրոց-քանակումներ, դասընթացքներ, արշաւներ, քանակումներ եւ համագումարներ:

- Ծանօթացնելու համար սկաուտութիւնը եւ տարածելու համար անոր նպատակները՝

Ա. Կը կազմակերպուի ծնողական հանդիպումներ, իրապարակային դասախոսութիւններ եւ ձեռնարկներ:

Բ. Կը իրատարակուի գիրքեր եւ յօդուածներ՝ մամուլով:

Գ. Յատուկ աշխատանք կը տարուի սկաուտութիւնը ծանօթացնելու հայ աշակերտութեան:



# ԿԱՆՈՆԱԳԻՐ





## **ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ՅՈՂ. 144.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան կրնայ անդամակցիլ ամէն հայ անհատ՝ մասնակցելով իր սեռին եւ տարիքին համապատասխան բաժանմունքին:

**ՅՈՂ. 145.-** Թեկնածուն սկաուտական կազմին անդամ կը դառնայ մասնաճիւղի Վարչութեան համաձայնութեամբ կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին հաստատումով:

**ՅՈՂ. 146.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական կազմի իւրաքանչիւր անդամ կը վճարէ անդամավճար, որ կը ծշդուի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կողմէ եւ կը հաստատուի Վարչութեան որոշումով:

**ՅՈՂ. 147.-** Անդամակցիլ փափաքողը պէտք է ներկայացնէ գրաւոր դիմումնագիր մը, իր բնակած վայրի Հ.Ս.Ը.Ս.ի մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին: 18 տարեկանէն փոքր անհատները պէտք է ունենան ծնողքին հաւանութիւնը հաստատող դիմումնագիր մը, իսկ 18 տարեկան եւ աւելի վեր տարիք ունեցող անհատները պարտին ունենալ երկու երաշխաւորներ:

### **Ծանօթ՝**

ա) Յիշեալ երաշխաւորները պէտք է նուազագոյնը երկու տարուան Հ.Ս.Ը.Ս.ական եղած ըլլան եւ ամբողջացուցած՝ 18 տարիքը:

բ) Փորձառական ժամանակաշրջանն մը ետք, նորագիրը կը կատարէ իր խոստումը կամ երդումը, այնուհետեւ դառնալով անդամ այդ մասնաճիւղին:

գ) Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական կազմի անդամը չի կրնար մաս կազմել այլ սկաուտական խումբերու:

**ՅՈՂ. 148.-** Խոստում կամ երդում կատարած նորագիրին կը տրուի անդամատետր՝ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին կնիքով եւ ստորագրութեամբ:

## **ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ**

**ՅՈՂ. 149.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ երեք բաժանմունքները՝

Մանչերու յատուկ

Աղջիկներու յատուկ

**1. Գայլիկ**

**1. Արծուիկ**

**2. Արի**

**2. Արենոյշ**

**3. Երեց**

**3. Պարմանուիի**

**Ծանօթ՝** ա) Այս բաժանմունքները կը կատարուին իիմք ունենալով տարիքը: Գայլիկ, արի, արծուիկ եւ արենոյշ բաժանմունքները կարելի է ենթարաժանումներու ենթարկել՝ տարեկան համախմբելով:

բ) Այս բաժանմունքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական սկաուտական տարիքային դասաւորումներուն:

գ) Ըստ շրջաններու յարմարութեան, կրտսեր գայլիկներն ու արծուիկները (3էն 6 տարեկան) կարելի է համախմբել նոյն խմբաւորումով՝ «**Սոկի»** անունով: Սոկիներու գործունեութիւնը ճշղելի է Ներքին Կանոնագրութեամբ:

**ՅՈՂ. 150.-** Սկաուտը, որ չի փափաքիր շարունակել սկաուտութիւնը, Վարչութեան հաստատումով կը փոխանցըլի մասնաճիւղի անդամական ոչ-տարազաւոր շարքերուն:

**ՅՈՂ. 151.-** 18 տարիքը ամբողջացուցած սկաուտը կըրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին, Կանոնագրով ճշղուած բոլոր իրաւունքներով:

**Ծանօթ՝** 16-18 տարեկան սկաուտը կրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին որպէս ունկնդիր:

## **ԿԱՐԳԵՐ**

**ՅՈՒ. 152.- Հ.Ս.Ը.Մ.ի Սկաուտութիւնը ունի հետեւեալ կարգերը, որոնք դաստիարակչական աշխատանքի հանգըր- ւաններ են՝ հիմնուած սկաուտներու աստիճանաբար զար- գացող մարմնային եւ մտային կարողութեանց վրայ՝**

**ա) Գայլիկներ կամ Արծուիկներ**

**1.- Կակուղ Թաքիկ**

**2.- Միաստղ**

**3.- Երկաստղ**

**բ) Արիներ կամ Արենոյշներ**

**1.- Նորագիր**

**2.- Նորընծայ**

**3.- Երկրորդ կարգ - (Բ. կարգ)**

**4.- Առաջին կարգ - (Ա. կարգ)**

**5.- Վկայեալ կարգ**

**գ) Երեցներ եւ Պարմանուիիներ**

**1.- Նախապատրաստական շրջան**

**2.- Մարզումի շրջան**

**3.- Ընդհանուր ծառայութեան շրջան**

**4.- Վկայեալ կարգ**

**դ) Խմբապետներ եւ Խմբապետուիիներ**

**1.- Արարատեան կարգ**

**Ծանօթ 1.- Սկաուտական բոլոր կարգերն ու գիտելիքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական պայմաններուն, բացի Արարատեան կարգեն, որուն նախապայմանները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը եւ առ ի՛ գործադրութիւն կը յղէ զանոնք շրջաններուն:**

Արարատեան կարգի պայմանները ամբողջացուցած անհատին անունը Շրջանային Վարչութեան կողմէն կը յղուի Կեդրոնական Վարչու- թեան՝ հանապատասխան կարգը ստանալու համար:

**Ծանօթ 2.- Սկաուտական շարքերու բոլոր անդամները կրնան WOOD BADGEի մասնագիտական քննութիւն անցընել իրենց բնակած երկրի ֆետերասիոնի կողմէ ճշդուած պայմաններով:**

# **ԽՈՍՏՈՒՄ, ԵՐԳՈՒՄ, ԴԱՒԱՆԱՆՔ, ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ**

**ՅՈՒ. 153.-** Կակուղ Թաթիկի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած գայլիկը կամ արծուիկը կը կատարէ հետեւեալ խոստումը՝

«Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ ըլլալու Աստուժոյ, Հայրենիքիս, ծնողիս և վոհմակի (երամի) օրէնքին: Գործել բարիք մը ամէն օր»:

Վոհմակի օրէնքն է՝

- 1.- Գայլիկը մտիկ կ'ընէ Ծեր Գայլը:
- 2.- Գայլիկը ինքզինքը մտիկ չ'ըներ:
- 3.- Գայլիկը մաքուր հայերէն կը խօսի:

Երամի օրէնքն է՝

- 1.- Արծուիկը մտիկ կ'ընէ Արծիւը:
- 2.- Արծուիկը ինքզինք մտիկ չ'ըներ
- 3.- Արծուիկը մաքուր հայերէն կը խօսի:

**ՅՈՒ. 154.-** Նորագիրի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած արին կամ արենոյշը կը կատարէ հետեւեալ խոստումը՝

Հ.Ս.Ը.Ս.ի արիին խոստումը՝

«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուժոյ և ծառայել Ազգին ու Հայրենիքիս:

- Միշտ օգնել ուրիշին և գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի և վեհանձն մարդ:
- Հնազանդիլ Հ.Ս.Ը.Ս.ի արիներու դաւանանքին»:

Հ.Ս.Ը.Ս.ի արենոյշին խոստումը՝

«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել  
Ազգին ու Հայրենիքին:

- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրև պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ:
- Հնազանդիլ Հ.Ս.Ը.Ս.ի արենոյշներու դաւանանքին»:

Հ.Ս.Ը.Ս.ի արիներու եւ արենոյշներու դաւանանքն է՝

- 1.- Արին-Արենոյշին խօսքը նուիրական է:
- 2.- Արին-Արենոյշը հնազանդ է:
- 3.- Արին-Արենոյշը հաւատարիմ եւ ուղղամիտ է:
- 4.- Արին-Արենոյշը միշտ կ'օգնէ ուրիշին:
- 5.- Արին-Արենոյշը բարեկամ է բոլորին եւ եղբայր (քոյր) ուրիշ սկառուտի՝ առանց ընկերային կարգի խըտրութեան:
- 6.- Արին-Արենոյշը բարեկիրթ է:
- 7.- Արին-Արենոյշը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ:
- 8.- Արին- Արենոյշը անասուններ եւ բոյսեր կը սիրէ եւ կը պաշտպանէ:
- 9.- Արին-Արենոյշը միշտ գուարթ եւ խանդավառ է:
- 10.- Արին-Արենոյշը աշխատասէր եւ կորովի է:
- 11.- Արին-Արենոյշը տնտեսող է:
- 12.- Արին-Արենոյշը մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով:

**ՅՈՂ. 155.**- Նախապատրաստական շրջանի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած երէցը կամ պարմանուիհին կը կատարէ հետեւեալ երդումը՝

- «Կ'երդնում պատույ վրայ
- Հաւատարիմ մնալ Հ.Ս.Ը.Ս.ի Ծրագիր-Կանոնագրին եւ սկառուտութեան սկզբունքներուն ու օրէնքներուն:
  - Ծառայել Ազգին, Հայրենիքին եւ աշխատիլ հայ ժողովուրդի իրաւունքներուն իրազործման:
  - Պայքարիլ այլասերման եւ ապազգայնացման դէմ՝ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը»:

**ՅՈԴ. 156.-** Միջազգային սկաուտութեան նշանաբանն է. «Միշտ Պատրա՛ստ»: Հ.Ս.Ը.Ս.ի նշանաբանն է. «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր»: Գայլիկինը եւ արծուլիկինը՝ «Լաւագո՛յն», արիինը եւ արենոյշինը՝ «Միշտ Պատրա՛ստ», երեցինը եւ պարմանուհիինը՝ «Ծառայո՛ղ»:

**ՅՈԴ. 157.-** Խոստում կամ երդում կատարած Հ.Ս.Ը.Ս.ի արին, արենոյշը, երեցը կամ պարմանուհին իր գլխարկին վրայ կը կրէ Հ.Ս.Ը.Ս.ի նշանակը եւ տարագին վրայ՝ սկաուտական շուշանածաղիկը:



**Հ.Ս.Ը.Ս.ի Շուշանածաղիկը**

**Հ.Ս.Ը.Ս.ի Նշանակը**

**ՅՈԴ. 158.-** Նորագիրը խոստում կամ երդում կատարելէ ետք, իրաւունք կը ստանայ իր տարագին հետ կրելու փողկապ եւ գլխարկ ու մասնակցելու սկաուտական պաշտօնական արարողութիւններուն:

## ԴՐՈՇՎԿՆԵՐ

**ՅՈԴ. 159.-** Իւրաքանչիւր մասնաճիւղի սկաուտական կազմը կ'ունենայ իր դրօշակը՝ նման Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական դրօշին, 120 սմ. x 90 սմ. մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով, որ կը ծշդուի Շրջանային Վարչութեան կողմէ: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը հայերէնով եւ բնակած երկրին լեզուով:

**ՅՈԴ. 160.-** Սկաուտական իւրաքանչիւր բաժանմունք կ'ունենայ իր դրօշակը՝ 90 սմ. x 67 սմ. մեծութեամբ, մասնա-

ճիւղին գոյնով: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին ա-նունը եւ բաժանմունքին թիւը կամ անունը հայերէնով եւ բնակած երկրին լեզուով:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

**ՅՈԴ. 161.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկառտութիւնը ունի հետեւեալ վարչական բաժանումները՝

### Ա.- ՄԱՐՄԻՆՆԵՐ

- ա) Շրջանային Սկառտական Խորհուրդ
- բ) Մեկուսի Շրջանի Սկառտական Խորհուրդ
- գ) Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդ:

### Բ.- ԺՈՂՈՎՆԵՐ

- ա) Համա-Հ.Ս.Ը.Ս.ական Խմբապետական Համագումար
- բ) Մասնաճիւղերու Խմբապետներու Ընդհանուր ժողով:

## ՄԱՐՄԻՆՆԵՐ

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

#### ԿԱԶՄ

**ՅՈԴ. 162.-** Հ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Սկառտական Խորհուրդը կը նշանակուի Հ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանի տեսողութեան:

**ՅՈԴ. 163.-** Շրջանային Սկառտական Խորհուրդը կը բաղկանայ սկառտական գործերու լաւատեղեակ 5-7-9-11 Հ.Ս.Ը.Ս.ականներէ: Այս թիւին մաս կը կազմեն Շրջանային Ընդհանուր Խմբապետը կամ Խմբապետուիին, Շրջանային Խմբապետը եւ Շրջանային Խմբապետուիին:

**ՅՈԴ. 164.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմէ իր դիւանը (Տարազաւորը մաս չի կազմեր դիւանին):

**ՅՈԴ. 165.-** Շրջանային Վարչութեան սկաուտական ներկայացուցիչը ի պաշտօնէ կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովներուն:

**ՅՈԴ. 166.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներուն թիւը եւ նստավայրը կը ճշդէ Շրջանային Վարչութեանը:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**ՅՈԴ. 167.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը պատրաստէ իր գործունեութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Շրջանային Վարչութեամ՝ առ ի վաւերացում:

**ՅՈԴ. 168.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը վարէ շրջանի սկաուտական ընդիհանուր աշխատանքները, կը հսկէ շրջանի սկաուտական գործունեութիւններուն, հանաձայն Սկաուտական Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովի որոշումներուն:

**ՅՈԴ. 169.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը գումարէ հերթական ժողովներ: Նիստերու վաւերացուած ատենագրութիւններու պատճենը կը փոխանցէ Շրջանային Վարչութեան:

**ՅՈԴ. 170.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը հրատարակել սկաուտական թերթ, կամ սկաուտական գիրքեր, Շրջանային Վարչութեան հաւանութեամբ եւ Կեղրոնական Վարչութեան արտօնութեամբ:

#### ԻՐԱՀԱՍՈՒԹԻՒՆ

**ՅՈԴ. 171.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդէն ներ-

կայացուցիչ մը խորհրդակցական ձայնով կը մասնակցի Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Ներկայացուցչական ժողովին:

**ՅՈՒ. 172.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը մասնածիւղերու Վարչութիւններուն հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Շրջանային Վարչութեան միջոցաւ:

#### ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԻՆ

**ՅՈՒ. 173.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը ի պահանջեալ հարկին կը գործէ իր գտնուած երկրի սկաուտական կանոնագրութեան տրամադրութեանց համաձայն:

**ՅՈՒ. 174.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը երկրէն դուրս բանակում, արշաւ, շրջապտոյտ, դասընթացք կազմակերպելու պարագային, պարտի Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութիւնը առնել, գործնական քայլերու դիմելէ առաջ: Ապա ձեռնարկի աւարտին պարտի գրաւոր տեղեկագիր (բարոյական եւ նիւթական) ներկայացնել Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան:

**ՅՈՒ. 175.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը իր հաշիւները կը պահէ կանոնաւոր եւ օրինաւոր հաշուական տոմարներով:

Իր գործունելութեան աւարտին նիւթաբարոյական տեղեկագիրը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան:

**ՅՈՒ. 176.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը կը ճշդէ Շրջանային Սկաուտական Խորհուրդի նիւթական պիտուն, զոր կը հայթայթէ Շրջանային Վարչութիւնը:

**ՅՈՒ. 177.-** Շրջանային Վարչութեան Շրջանային Սկաուտական Խորհուրդ նիւթական փոխանցումները կը կատարուին Շրջանային Սկաուտական Խորհուրդի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իրաքանչիւր գլուխի համար առանձին:

## **ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ**

**ՅՈԴ. 178.-** Մեկուսի Շրջանի Սկառլտական Խորհուրդի կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը նոյնանայ Շրջանային Սկառլտական Խորհուրդին սահմանուած յօդուածներու հասկացողութեամբ:

**Ծանօթ՝** Այս կանոնագրութեամբ՝ այն բոլոր յօդուածներուն մէջ, ուր արձանագրուած է Շրջանային Սկառլտական Խորհուրդի անուանումը կը համապատասխան նաեւ Մեկուսի Շրջաններու Սկառլտական Խորհուրդներուն:

## **ՄԱՍՆԱՅԻՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ**

**ՅՈԴ. 179.-** Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի նշանակել Մասնաճիւղի Սկառլտական Խորհուրդ, որուն կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը ճշդուին իր շրջանի Ներքին Կանոնագրութեամբ:

## **ԺՈՂՈՎՆԵՐ**

### **ՀԱՄԱ-Ք.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԳՈՒՄԱՐ**

**ՅՈԴ. 180.-** Համա-Ք.Ս.Ը.Մ.Ական Խմբապետական Համագումարը կը կայանայ նուազագոյնը չորս տարին անգամ մը, զայն կը կազմակերպէ եւ կը հովանաւորէ Ք.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

**ՅՈԴ. 181.-** Համա-Ք.Ս.Ը.Մ.Ական Խմբապետական Համագումարին կը մասնակցին Շրջանային Ընդհանուր Խըմբապետները/Խմբապետուհիները եւ Շրջանային Խմբապետներն ու Խմբապետուհիները, որոնց չգոյութեան պարագային՝ Շրջանի բարձրագոյն պաշտօն ունեցող Խմբապետը եւ Խմբապետուհին: Մեկուսի շրջաններու պարագային՝ կը մասնակցին աղջկանց եւ տղոց բարձրագոյն պաշտօն ունեցող ներկայացուցիչները:

**Ծանօթ.-** Ի պահանջեալ հարկին Կեդրոնական Վարչութիւնը կը հրա-  
լիրէ անցեալի վաստակաւոր խմբապետ/ուիիներ:

**ՅՈԴ. 182.-** Համա-Հ.Ս.Ը.Ս.ական Խմբապետական Հա-  
մագումարը՝

ա) Կը լսէ իւրաքանչիւր Շրջանի սկաուտական գործու-  
նէութեան մասին ամփոփ տեղեկագիր՝ առ ի տեղեկութիւն:

բ) Կ'ուսումնասիրէ տեղեկագրերու լոյսին տակ՝ Շրջան-  
ներու Եւ Մեկուսի Շրջաններու սկաուտական մասնագիտա-  
կան հարցերը Եւ կը թելադրէ գործունէութեան ուղեգիծ:

գ) Կը զբաղի սկաուտական մասնագիտական հարցե-  
րով, ազգային դաստիարակչական գիտելիքներով, գործ-  
նական աշխատանքներով, Համա-Հ.Ս.Ը.Ս.ական բանա-  
կումներու ծրագրումով, Եւայլն:

դ) Կը մշակէ սկաուտական ընդիհանուր գործունէութեան  
ուղեգիծ:

ե) Կրնայ Սկաուտական Ընդիհանուր Կանոնագիրին  
վերաբերեալ, բարեփոխութեան առաջարկներ բանաձեւել:

զ) Իր եզրակացութիւնները, առաջարկներն ու թելադ-  
րանքները կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան:

**ՅՈԴ. 183.-** Համա-Հ.Ս.Ը.Ս.ական Խմբապետական Հա-  
մագումարը չի կրնար զբաղիլ Միութեան վարչական, կազ-  
մակերպական Եւ կանոնագրային հարցերով:

## ՄԱՍՆԱԳԻՂԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**ՅՈԴ. 184.-** Մասնագիլերու Խմբապետներու Ընդիհա-  
նուր ժողովը կը բաղկանայ Շրջանային Ընդիհանուր Խմբա-  
պետէն կամ Խմբապետուիիէն, Շրջանային Խմբապետէն ու  
Խմբապետուիիէն Եւ մասնագիլերու Խմբապետներէն կամ  
Խմբապետուիիներէն:

ա) Հարկ եղած պարագային կը հրաւիրուին շրջանի գոր-  
ծօն Խմբապետներ Եւ Խմբապետուիիներ:

բ) Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամները կրնան մասնակցիլ այս ժողովին:

գ) Ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ գայն կը փոխանցէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

**ՅՈԴ. 185.-** Մասնաճիւղերու Խմբապետներու Ընդհանուր Ժողովը՝

ա) Կը լսէ մասնաճիւղերու գրաւոր ամփոփ գեկոյցները՝ սկաուտական գործունեութեան մասին:

բ) Կը քննէ սկաուտական մասնագիտական հարցեր եւ կը գտնէ համապատասխան լուծումներ՝ ջանալով բարելաւել մասնաճիւղերու գործունեութեան կարելիութիւնները:

## ՊԱՇՏՕՆՆԵՐ

**ՅՈԴ. 186.-** Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը ունին իրենց յատուկ սկաուտական հետեւեալ պաշտօնները՝

- 1.- Շրջանային Ընդհանուր Խմբապետ/Խմբապետուիի.
- 2.- Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուիի.
- 3.- Մասնաճիւղի Խմբապետ/Խմբապետուիի.
- 4.- Միաւորի Խմբապետ եւ Խմբապետուիի:

**ՅՈԴ. 187.-** Վերոյիշեալ պաշտօններու (թիւ 1 եւ 2) գործունեութեանց ժամանակաշրջանը ճշդուած է սոյն կանոնագրութեամբ, իսկ թիւ 3 եւ 4 պաշտօններու ժամանակաշրջանը հարկ է ճշել Ներքին Կանոնագրութիւններու մէջ:

**ՅՈԴ. 188.-** Պաշտօն մը պէտք է վաւերացուած ըլլայ Սկաուտական եւ Վարչական համապատասխան մարմիններու կողմէ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅՔԻ

**ՅՈԴ. 189.-** Շրջանի մը սկաուտութեան ընդհանուր պետն է:

ա) Շրջանեն ներս այս պաշտօնը կը հաստատուի երբ շըրջանը ունենայ նուազագոյնը 500 սկառւտ եւ երեք մասնածիւլ:

բ) Այն շրջանը որ չունի Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուիի, չի կրնար Շրջանային Ընդհանուր Խմբապետ/-Խմբապետուիի ունենալ:

գ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ: Կը գործ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանին:

դ) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ:

ե) Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանով որ չդադրեցնէ իր միութենական գործունեութիւնը:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՐԱԿԱՐ

**ՅՈՒ. 190.-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուիին պարտի նախապէս երկու տարի Շրջանային Խըմբապետի/Խմբապետուիի պաշտօն վարած ըլլալ:

**Ծանօթ՝** Նախընտրաբար ունենալ Արարատեան Կարգ եւ Wood Badge:

## ՊԱՐՏԱՒՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՒՍՈՒԹԻՒՆ

**ՅՈՒ. 191.-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուիին՝

ա) Կը հսկէ իր շրջանի սկառւտական ընդհանուր աշխատանքներուն:

բ) Կը մշակէ Շրջանային Խմբապետներու գործակցութեամբ՝ իր շրջանի սկառւտական շարժումին ընդհանուր ուղեգիծը:

գ) Կը վարէ մասնաճիւղերու խմբապետներու ընդհանուր ժողովը:

դ) Կը վարէ սկառւտական ընդհանուր հանդիսութիւնները:

ե) Կը մասնակցի Շրջանային Սկառւտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:

զ) Կը մասնակցի Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարին՝ ի պաշտօննէ:

է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅՆԻ

**ՅՈԴ. 192.-** ա) Շրջանային Խմբապետը գայլիկներու, արիներու եւ երեցներու պատասխանատու խմբապետն է, իսկ Շրջանային Խմբապետուիհին՝ արծուիկներու, արենոյշներու եւ պարմանուիհիներու:

բ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանին:

### ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Տես՝ շրջանի Սկաուտական Ներքին Կանոնագիրը):

### ՊԱՐՏԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՅՈԴ. 193.-** Շրջանային Խմբապետը կամ Շրջանային Խմբապետուիհին՝

ա) Կը հսկէ մանչերու կամ աղջկանց բաժնի գործունեութիւններուն վրայ:

բ) Կը յանձնէ բոլոր մասնաճիւղերէն ներս իր բաժնի համապատասխան խմբապետներու աստիճաններն ու պաշտօնները:

գ) Կը վարէ իր թեւին յատուկ՝ ընդհանուր հանդիսութիւնները:

դ) Կը մասնակցի Յամա-Դ.Ս.Ը.Ս.ական Խմբապետական Յամագումարին՝ ի պաշտօնէ:

ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:

զ) Կը մասնակցի Մասնաճիւղերու Խմբապետական Ընդհանուր ժողովին՝ ի պաշտօնէ:

է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

## **ՄԱՍՆԱՅԻՒՂԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅՔԻ**

**ՅՈԴ. 194.-** Մասնածիւղի մը սկաուտական բաժնի ընդհանուր պատասխանատուն է:

**ՅՈԴ. 195.-** Մասնածիւղի Խմբապետ/Խմբապետուիին կը նշանակուի մասնածիւղի Վարչութեան կողմէ՝ համախորհուրդ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

**ՅՈԴ. 196.-** Կը գործէ մասնածիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

**ՅՈԴ. 197.-** Մասնածիւղի Խմբապետին նշանակումի պայմանները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին շրջաններու կամ Մեկուսի շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

## **ՄԻԱԽՈՐԻ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅՔԻ**

**ՅՈԴ. 198.-** Մասնածիւղի սկաուտական միաւորմերը կ'ունենան Միաւորի Խմբապետ եւ Խմբապետուիի, որուն նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին Շըրջաններու կամ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

## **ԱՍՏԻճԱՆԱՌՈՐԱԿԱՆ ԿԱԶՄ**

**ՅՈԴ. 199.-** Սկաուտական շարքերը կ'ունենան հետեւեալ աստիճանաւորական կազմները, որոնք իրենց կարողութեան եւ փորձառութեանց համաձայն բաժնուած են զանազան աստիճաններու:

**ՅՈԴ. 200.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ աստիճանները՝

<b>ԱՐԾՈՒԻԿ</b>	<b>ԱՐԵՆՈՅՑ</b>	<b>ՊԱՐՍԱՌԱՋՈՂԻ</b>	<b>ՓՈԽ-ԾԱԽԱՆՎԱԿԵՏ</b>	<b>ԻԱԼԻՋԴՐԱ-ԾՎԱՀ</b>	<b>ՓՈԽ-ԱՐՁԵՑՈՒ</b>
Երամի՝ Պետ Կրնչաց առաջնորդությունը	Խոնքապետություն Համբակապետություն	Փոխ-Խոնքապետություն Փոխ-Խոնքապետություն	Տաճառականապետություն Տաճառականապետություն	Ալավշտություն Ալավշտություն	Փոխ-Արձնություն Փոխ-Արձնություն
Երամի՝ Պետ Կրնչաց առաջնորդությունը (Պայուն և Պարեկարայ)	Խոնքապետություն Համբակապետություն	Փոխ-Խոնքապետություն Փոխ-Խոնքապետություն	Տաճառականապետություն Տաճառականապետություն	Ալավշտություն Ալավշտություն	Փոխ-Արձնություն Փոխ-Արձնություն
Երամի՝ Պետ Կրնչաց առաջնորդությունը (Պայուն և Պարեկարայ)	Խոնքապետություն Համբակապետություն	Փոխ-Խոնքապետություն Փոխ-Խոնքապետություն	Տաճառականապետություն Տաճառականապետություն	Ալավշտություն Ալավշտություն	Փոխ-Արձնություն Փոխ-Արձնություն

**ՅՈՂ. 201.-** Յօդուած 200-ով ճշդուած աստիճանաւորական կազմին նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները, իրաւասութիւնները եւ մարմիններու հետ յարաբերութիւնը իրաքանչիւր շրջան կը տնօրինէ իր երկրի սկաուտական կանոններուն համաձայն: Այդ բոլորը պետք է ամփոփուած ըլլան շրջանի Սկաուտական Ներքին Կանոնագիրին մէջ:

**ՅՈՂ. 202.-** Սկաուտական աստիճանները մնայուն հանգանանք ունին:

**ՅՈՂ. 203.-** Աստիճանը տիտղոս մըն է միայն եւ ենթակային իրաւական պատասխանատուութիւն չի տար:

**ՅՈՂ. 204.-** Աստիճանաւոր մը իր պատասխանատուութիւնները կը ստանայ այն ատեն միայն, երբ կ'ունենայ նաև համապատասխան պաշտօն:

**ՅՈՂ. 205.-** Սկաուտ աստիճանաւորը կը գործադրէ իրմէ գերադաս գործօն աստիճանաւորին կամ պաշտօնի վրայ եղող սկաուտ պատասխանատուին հրահանգները:

**ՅՈՂ. 206.-** Ժողովական որոշումները սկաուտական շարքերուն կը հասնին նուիրապետական կարգով:

## **ՇԱՐՔԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

**ՅՈՂ. 207.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը կը բաղկանայ խումբերէ, որոնց կառոյցը հետեւեալն է՝

Սկաուտական բաժանմունքներն են՝

- Գայլիկական վոհմակ - Արծուիկներու երամ
- Արիներու խումբ - Արենոյշներու խումբ
- Երեցական փաղանգ - Պարմանուիկներու փաղանգ

## **Ա.- Գայլիկներու բաժանմունք**

- 1.- Գայլիկները կը կազմեն վոհմակը:
- 2.- Վոհմակը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
- 3.- Վեց գայլիկներ կը կազմեն վեցեակը:
- 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետ եւ վեցեակապետ մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունեութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետ:
- 6.- Վոհմակը կ'ունենայ վոհմակի պետ (ուսուցումի պատասխանատու՝ Աքելլա) եւ վոհմակի երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու՝ Պալու եւ Պաղերա):
- 7.- Վոհմակը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
- 8.- Վոհմակը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

## **Բ.- Արծուիկներու բաժանմունք**

- 1.- Արծուիկները կը կազմեն երամը:
- 2.- Երամը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
- 3.- Վեց արծուիկներ կը կազմեն վեցեակը:
- 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետուիի եւ վեցեակապետուիի մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունեութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետուիի:
- 6.- Երամը կ'ունենայ երամի պետ (ուսուցումի պատասխանատու՝ Աքելլա) եւ երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու՝ Պալու եւ Պաղերա):
- 7.- Երամը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
- 8.- Երամը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

## **Գ.- Արիներու կամ Արենոյշներու բաժանմունք**

- 1.- Արիները կամ արենոյշները կը կազմեն խումբը:
- 2.- Խումբը կը բաղկանայ չորս խմբակներէ:

3.- Առաւելագոյնը 8 արիներ կամ արենոյշներ կը կազմեն խմբակը:

4.- Առաջնորդ/Առաջնորդուիի մը եւ փոխ-առաջնորդ/-առաջնորդուիի մը կը վարեն խմբակը:

5.- Երկու խմբակներ կ'ունենան վարիչ առաջնորդ/առաջնորդուիի մը:

6.- Խումբը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուիի եւ խմբապետ/խմբապետուիի մը:

7.- Խումբը կ'ունենայ առաւելագոյնը 45 անդամ:

8.- Խումբը կը զատորոշուի թիւով, իսկ խմբակը՝ կենդանիի անունով:

#### **Դ.- Երեցներու կամ Պարմանուիիներու բաժանմունք**

1.- Երեցները կամ պարմանուիիները կը կազմեն փառանգը:

2.- Տասը Երեցներ կամ պարմանուիիներ կը կազմեն տասնեակը:

3.- Տասնեակը կը վարեն փոխ-տասնապետ/փոխ-տասնապետուիի եւ տասնապետ/տասնապետուիի մը:

4.- Փաղանգը կ'ունենայ առաւելագոյնը 30 անդամ:

5.- Փաղանգը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուիի մը եւ խմբապետ/խմբապետուիի մը:

6.- Փաղանգը եւ տասնեակը՝ կ'ունենան պատմական անուն:

**Ծանօթ՝** Վերոյիշեալ դասաւորումները ընդհանուր բնոյք ունին: Իւրաքանչիւր շրջան կը պատշաճի իր երկրի կանոններուն՝ մեկնաբանւած շրջանի Ներքին Կանոնագիրով:

**ՅՈՒ. 208.-** Յօդուած 207-ով սահմանուած կառոյցը կը կազմէ սկաուտական միաւորը:

**ՅՈՒ. 209.-** Նոր միաւոր մը կարելի է կազմել Երկու ձեւով՝

ա) Երկու կամ երեք սկաուտական բաժանմունքներէ (օրինակ՝ Վոհմակ, Խումբ, Փաղանգ):

բ) Նոյն բաժանմունքէն նուազագոյնը Երկու խմբաւորումներէ (օրինակ՝ գայլիկական երկու Վոհմակ):

**ՅՈՂ. 210.-** Յ.Ս.Ը.Ս.ի անունով սկառտական բաժանմունքներ կազմելու համար հարկ է ունենալ մասնաճիշտի Վարչութեան կամ անոր նշանակած Սկառտական խորհուրդի արտօնութիւնը եւ ենթակայ ըլլալ անոր որոշումներուն:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ-ՊԱՏԺԱԿԱՆ

(Տեսնել նաեւ Միութեան Ընդհանուր Ծրագիր Կանոնագիրի Յօղ. 130-էն 143, էջ 34-էն 37)

**ՅՈՂ. 211.-** Յ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրին եւ ոգիին, սկառտական սկզբունքներուն եւ Ծրագիր-Կանոնագիրին դէմ գործող սկառտական շարքերու իրաքանչիւր անդամ կ'ենթարկուի իր գործած յանցանքին համապատասխան պատիժի:

**ՅՈՂ. 212.-** Կարգապահական տեսակետով, սկառտական շարքերու ամէն անդամ պատասխանատու է այն մարմինին կամ ժողովին, որուն իրաւասութեան դէմ յանցանք գործած է:

**ՅՈՂ. 213.-** Պատժական ամէն որոշում պէտք է առնուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**Շահաօթ՝** ա) Բացի սկառտական պատիժներու առաջին երեք կտեղին (տես՝ Յօղ. 221), որոնք կրնան տրուիլ նաեւ խումբի պատասխանատուին կողմէ (դիտողութիւն, յանդիմանութիւն, խումբի գործունեութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում):

բ) Պատժական տնօրինմաններու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՈՂ. 214.-** Կարգապահական պատիժներու դէմ կարելի է բողոքել՝

ա) Պատժական որոշումի հաղորդումէն մինչեւ 2 ամիս:

բ) Պատժական որոշումը տուած մարմինին անմիջականօրէն գերադաս մարմինին:

**ՅՈՒ. 215.-** Դատավճիռի մը դեմ մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ բողոքողը կը զրկուի իր դատը գերադաս ժողովին կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն:

**ՅՈՒ. 216.-** Դատավճիռի մը դեմ բողոքը կը ներկայացնի պատիժը որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:

**ՅՈՒ. 217.-** Բողոքառու մարմինը կամ ժողովը՝

ա) Հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յա-  
տուկ դատական ատեանի մը:

բ) Պարտաւոր է լսել պատիժը սահմանած մարմինը եւ  
պատժուած անդամը:

գ) Անոր որոշումները վերջնական են:

**ՅՈՒ. 218.-** Բոլոր պատիժները ենթակային կը հաղորդը-  
լին գրաւոր եւ նույիրապետական կարգով:

**ՅՈՒ. 219.-** Սկաուտական շարքերու աստիճանաւորը կը  
դատուի իր պաշտօնը վաւերացուցած մարմինին կամ ժո-  
ղովին կողմէ:

**ՅՈՒ. 220.-** Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի երկու ձեւի  
պատիժներ՝

**Ա.- Սկաուտական**

**Բ.- Միութենական**

**ՅՈՒ. 221.-** Սկաուտական պատիժներն են՝

1) Դիտողութիւն (բերանացի կամ գրաւոր):

2) Յանդիմանութիւն (բերանացի կամ գրաւոր):

3) Խումբի գործունեութեան օգտակար եղող աշխա-  
տանքներու յաւելեալ կատարում (ջուր կրել, փայտ հաւա-  
քել, բանակատեղին եւ սկաուտական սենեակը նաքրել ու  
ննան այլազան աշխատանքներ, որոնք կրնան օգտակար  
ըլլալ խումբի գործունեութեան):

**Ծանօթ՝** Այս պատիժները (1-3) կը տնօրինուին պատասխանատու  
աստիճանաւորին կամ մարմինին կողմէ:

**4) Փողկապ կրելու իրաւունքն զրկում.** Սկառտը կը զրկուի փողկապ կրելու իրաւունքն առաւելագոյնը չորս շաբաթ: Այս պատիժը կը նշանակէ թէ զրկուած է սկառտական բոլոր իրաւունքներէն, բայց զերծ չէ կացուցուած իր պարտաւորութիւններէն:

**5) Կախակայում սկառտական աշխատանքներէ.** Սկառտը կը զրկուի սկառտական աշխատանքներուն մասնակցելէ, բայց կը կատարէ իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Այս պատիժը կը տրուի առաւելագոյնը չորս շաբթուան համար:

**6) Աստիճանագրկում/պաշտօնագրկում.** Երբ աստիճանաւորը իր կոչումին վայել բարձրութեան վրայ չի գտնուիր վարչական անկարողութեան, բարոյական սայթաքումի եւ այլ պատճառներով, իրեն վստահուած աստիճանը/պաշտօնը ետ կ'առնուի: Նման պատիժ մը կը տնօրինուի աստիճանաւորին գործունեութիւնը հակաշռող մարմինին կամ ժողովին կողմէ:

**7) Դադրեցում սկառտական շարքերէն.** Յաճախակի պատիժներու ենթարկուած սկառտը, որ իր ընթացքով կը խանգարէ խումբին աշխատանքները, կը դադրեցուի սկառտական շարքերէն:

**8) Միութենական շարքերէն հեռացումի առաջարկ.** Միութենան գոյքը իրացնող, նիւթական եւ բարոյական սայթաքումներ ունեցած սկառտին համար նուիրապետական կարգերով կրնայ պահանջուիլ Միութեան շարքերէն հեռացում: Այս պահանջը կրնայ բանաձեւել Շրջանային Սկառտական խորհուրդը միայն, քննելէ ետք ենթակային պարագան եւ լսելէ ետք անոր բացատրութիւնները: Պատիժը կը սահմանուի Շրջանային Վարչութեան կողմէ, լսելէ ետք Շրջանային Սկառտական խորհուրդի գրաւոր գեկուցումը եւ ենթակային գրաւոր բացատրութիւնները:

**ՅՈՒ. 222.-** Վերոյիշեալ պատիժները (բացի Յոդ. 221 - ութերորդէն) սկառտական են եւ սկառտը չեն զրկեր Միու-

թենական այլ գործունեութենք: Անոնք կը վերաբերին 18-էն վար տարիք ունեցող սկաուտներուն:

**ՅՈԴ. 223.-** Միութենական պատիժներու մեկնաբանութիւնը կը կատարուի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի տրամադրութեանց համաձայն:

**ՅՈԴ. 224.-** Միութենական պատիժները կը տնօրինուին Մասնաճիւղի, Շրջանային կամ Կեդրոնական Վարչութեանց կողմէ, ամոնց նշանակած սկաուտական մարմիններուն առաջարկով:

## ՏԱՐԱՁՆԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐ

**ՅՈԴ. 225.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շարքերուն տարագները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը:

Երբ երկրի մը Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտները պարտաւորուած են կրելու տեղույն սկաուտական տարազները, հնարաւորութեան սահմաններուն մէջ պէտք է կրես Հ.Ս.Ը.Ս.ի օստին, Հ.Ս.Ը.Ս.ի նշանակը՝ զիխարկին վրայ եւ Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շուշանածաղիկը՝ ձախ կուրծքին վրայ եւ եռագոյն երիզ մը աջ գրպանին վերեւ:

**ՅՈԴ. 226.-** Սկաուտը իր տարազին վրայ կրնայ կրել Սկաուտական Ներքին Կանոնագրով արտօնուած նշաններ:

**ՅՈԴ. 227.-** Սկաուտական խումբերը կ'ունենան իրենց յատուկ կազմածներն ու գոյքերը, որոնք Միութեան սեփականութիւնն են:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**ՅՈԴ. 228.-** Իւրաքանչիւր շրջան կ'ունենայ իր Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնը, որ Շրջանային Ներկայացուցական ժողովի հաւանութեմէն ետք, կը վաւերացուի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈՂ. 229.-** Շրջաններու Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնները կրնան պատշաճեցուած ըլլալ շրջանի կամ երկրի սկաուտական ընդհանուր կանոններում: Շրջան մը, ուր Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շարքերը անհրաժեշտութիւն չեն զգար կապուելու իրենց երկրի սկաուտական շարքերուն, կրնան իրենց յատուկ ներքին կազմակերպութիւնը ունենալ՝ միշտ յարգելով Հ.Ս.Ը.Ս.ի Սկաուտական Կանոնագրութեան սկզբունքները եւ տրամադրութիւնները:

**ՅՈՂ. 230.-** Շրջաններու Ներքին Կանոնագրութեանց մէջ անհրաժեշտ է յստակօրէն ծշդել՝

- ա) Սկաուտական շարքերու ընդունման պայմանները:
- բ) Զանազան բաժանմունքներու տարիքները եւ փոխանցումներու պայմանները:
- գ) Սկաուտական ժողովներու եւ վարչական մարմիններու յարաբերութիւնները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւններու սահմանները:
- դ) Աստիճաններու տուչութեան պայմանները եւ արարողութիւնները:

**ՅՈՂ. 231.-** ա) Մասնաճիւղէ-մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի Վարչութեան արտօնութեամբ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի գիտակցութեամբ եւ Շրջանային Վարչութեան Վաւերացումով:

բ) Շրջանէ-շրջան տեղափոխութեան պարագային, ենթական պէտք է ունենայ իր պատկանած շրջանի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան փոխանցագիրը:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ  
ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ





# ՆՊԱՏԱԿ

Ընդհանուր բանակումներու նպատակն է՝

- 1) Ի մի հաւաքել Հ.Ս.Ը.Ս.ի գանազան շրջաններու արիմեռը, արենոյշները, երեցներն ու պարմանուիները:
- 2) Տալ ազգային եւ միութենական դաստիարակութիւն եւ առիթ ստեղծել վոլխադարձ ծանօթացման:
- 3) Սատարել Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան միջազգային ծանօթացման:

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**ՅՈՂ. 232.**- Ընդհանուր բանակումներուն կրնան մասնակցիլ հետեւեալ պայմանները լրացնող արիմեռը, արենոյշները, երեցներն ու պարմանուիները՝

- ա) Ամբողջացուցած ըլլան 14 տարիքը:
- բ) 10 օրեր սկաուտական բանակումի մասնակցած ըլլան:
- գ) Ունենան քաջառողջ վիճակ:

**ՅՈՂ. 233.**- Ընդհանուր բանակումին կարենալ մասնակցելու համար թեկնածուն կը ներկայացնէ դիմումնագիր, տրամադրուած Կեդրոնական Վարչութեան կողմէ: Դիմումնագիրին մէջ կ'արձանագրուին ենթակային՝

- ա) անունն ու մականունը,
- բ) ծննդեան թուականը,
- գ) հպատակութիւնը,
- դ) անցագրի (passport) թիւը եւ թուականը,
- ե) պատկանած շրջանին եւ մասնաճիւղին անունը,
- զ) սկաուտական կարգը, աստիճանը եւ պաշտօնը,
- է) մասնակցած բանակումներու թուականը եւ վայրը,
- ը) հասցէն եւ հեռաճայնի թիւերը,
- թ) բժշկական հաստատագիրը:

## **ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ**

**ՅՈԴ. 234.-** Իւրաքանչիւր շրջանի պատուիրակութիւնը բաժնուի խմբակներու/տասնեակներու եւ խումբերու/-փաղանգներու:

- ա) 5-7 արիներ/արենոյշներ կը կազմեն մէկ խմբակ:
- բ) 8-10 երեցներ/պարմանուիհներ կը կազմեն մէկ տասնեակ:
- գ) 2-4 խմբակներ կը կազմեն արիներու/արենոյշներու խումբ:
- դ) 2-4 տասնեակներ կը կազմեն երեցներու/պարմանուիհներու փաղանգ:
- ե) Պատուիրակութիւններուն ընկերակցող պատասխանատու աստիճանաւորներուն թիւը կը ծշդէ Կեդրոնական Վարչութիւնը՝ մասնակցողներու թիւին համեմատութեանք:
- զ) Պատուիրակութիւն նը կը մասնակցի նուազագոյնը մէկ խմբակով/տասնեակով:
- է) Իւրաքանչիւր պատուիրակութիւն կ'ունենայ մէկ գլխաւոր պատասխանատու:

**Ծանօթ՝** Ընդհանուր բանակումին կրնան մասնակցիլ Կեդրոնական Վարչութեան ծշդած թիւն աւելի աստիճանաւորներ (խմբապետ/ուիհի, Փոխ-խմբապետ/ուիհի): Այդ աստիճանաւորները կը մնան բանակումի ընդհանուր խմբապետութեան տրամադրութեան տակ եւ կը ստանձնեն անոր ծշդած պարտականութիւնները:

## **ԲԱՆԱԿՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ**

**ՅՈԴ. 235.-** Ընդհանուր բանակումը կ'ունենայ Գործադիր Մարմին մը՝ բաղկացած 5-9 անդամներէ, որոնք կը նշանակւին Հ.Ս.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**Ծանօթ՝**

- ա. - Գործադիր Մարմինը կը բաղկանայ.
- Ընդհանուր խմբապետ/խմբապետուիհի
- Փոխ խմբապետ

- Փոխ Խմբապետուիիի
- Կազմակերպչական-դաստիարակչական Խմբապետ/Խմբապետուիիի
- Ցարաքերական Խմբապետ/Խմբապետուիիի
- բ.- Ի պահանջեալ հարկին, կարելի է ծշդել յաւելեալ պաշտօններ:
- գ.- Գործադիր Մարմինի անդամներուն պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները գրաւոր ձեւով կը ծշդուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՈՒ. 236.**- Գործադիր Մարմինը կը հսկէ ընդհանուր բանակումի աշխատանքներու գործադրութեան:

**ՅՈՒ. 237.**- Գործադիր Մարմինին կ'օժանդակեն բանակումին մասնակցող պատուիրակութիւնները գլխաւորող Խմբապետներն ու Խմբապետուիինները, որոնց կը տրուի պաշտօն, ըստ բանակավայրի կարիքներուն, ծշդուած Ընդհանուր Խմբապետին կողմէ:

**ՅՈՒ. 238.**- Ընդհանուր բանակումը կ'ունենայ օրուան հերթապահ մը, որ կը գործադրէ օրուան յայտագիրը: Օրուան հերթապահը կը ծշդուի ընդհանուր բանակումի եռանդամ Խմբապետական կազմին կողմէ:

**ՅՈՒ. 239.**- Ընդհանուր բանակումը կը կազմակերպուի չորս տարին անգամ մը: Կը տեւէ 10էն 15 օր: Բանակումի պաշտօնական բաժինը կը տեւէ 8էն 10 օր:

**ՅՈՒ. 240.**- Գործադիր Մարմինը կը պատրաստէ ընդհանուր բանակումի թեման եւ աշխատանքները, որոնք Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք, վերջնականացած յայտագիրը կը յղուի շրջաններուն նախընտրաբար բանակումի թուականէն մէկ տարի կամ ամէնէն ուշը վեց ամիս առաջ:

**ՅՈՒ. 241.**- Բանակումը կ'ունենայ խորհրդանիշ, քայլերգ եւ դրօշակ, պատրաստուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## **ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ**

**ՅՈԴ. 242.-** Ընդհանուր բանակումին մասնակցող արիները, արենոյշները, երեցները եւ պարմանուիիները նախընտրաբար կը համախմբուին իրարմէ անջատ 4 բանակատեղիներու մեջ: Կ'ունենան ներքին աշխատանքներու յայտագիր, որ պէտք չէ խանգարէ Գործադիր Մարմինի ճշդած ընդհանուր աշխատանքները:

**ՅՈԴ. 243.-** Իրաքանչիւր բանակատեղի կ'ունենայ իր խմբապետական կազմը, որուն իրաւասութիւնները եւ պարտաւորութիւնները կը ճշդէ բանակումի Գործադիր Մարմինը:

## **ԲԱՆԱԿՎԱՅՐ**

**ՅՈԴ. 244.-** Ընդհանուր բանակումի բանակավայրը կը ճշդէ Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը:

Բանակումի թուականէն մէկ տարի առաջ որոշուած վայրը (շրջան-երկիր) կը փոխանցուի շրջաններուն:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

**ՅՈԴ. 245.-** Կեդրոնական Վարչութիւնը մօտէն կը հետեւի բանակումի բոլոր աշխատանքներուն: Բանակումէն ետք կը կազմէ թղթաձրար, ուր ամփոփուած կ'ըլլան բանակումին հետ կապուած բոլոր տեղեկութիւնները (ծրագիր, նախահաշիւ, տեղեկագիր, նիւթական հաշուեկշիռ, նկարագրականներ, վաւերաթուղթեր, եւայլն):



---

ԺՈՂՈՎԱԿԱՆ  
ԵԽ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԿԱՆՈՆԵՐ

**Վաւերացուած՝ Յ.Ս.Ը.Մ. Դ. Պատգամաւորական  
Ընդհանուր Ժողովին կողմէ, Աթենք, 1987**



Ծ.Մ.Հ.Մ.ի կազմակերպական կեանքին սիրտը կը կազմեն ժողովները եւ վարչութիւնները: Անոնք է, որ մղում կու տան Միութեան գործունեութեան՝ կը գծեն ուղեգիծներ, կ'ընտրեն պատասխանատուներ, կ'առնեն գործադրելի որոշումներ:

Անհրաժեշտ է, որ ժողովները եւ վարչութիւնները իրենց ժողովական աշխատանքները տանին կանոնաւոր կերպով եւ վարանումներ, թիւրիմացութիւններ, անհատական սիալ մեկնաբանութիւններ չառեղծեն դժուարութիւններ եւ չդանդաղեցնեն այդ աշխատանքները, մոցնել տալով հիմնականը՝ գործը:

Ծ.Մ.Հ.Մ.ի Ընդհանուր Կանոնագրութիւնը եւ Ներքին Կանոնագրութիւնները սահմանած են ժողովներու եւ վարչութիւններու իրաւասութիւններն ու պարտականութիւնները եւ ձշագած անոնց յարաքերութիւնները:

Անսպասելի է սակայն, որ ժողովական գործնական կեանքին վերաբերող ամէն տրամադրութիւն տեղ գտած ըլլայ կանոնագրութիւններուն մէջ: Ժողովական ընդհանուր ըմբռնումները եւ միութենական աւանդութիւնները կը կազմեն անգիր կանոններ, որոնք, կանոնագրութիւններուն կողքին՝ կը պայմանաւորեն ժողովներու եւ վարչութիւններու ժողովական կեանքը:

Շետեւաբար, Շ.Մ.Հ.Մ.ի համագաղութային կառոյցին հաստատումը, ժողովական տարբեր լմբոնում ունեցող երկիրներու մէջ նոր մասնաձիւղերու հիմնումը, ինչպէս նաև տեղ-տեղ ժողովական աւանդութիւններու տկարացումը անհրաժեշտութիւն դարձուցին ժողովական եւ վարչական կանոններու մշակումը:

Ժողովական եւ վարչական կանոնները կոչուած են ուղեցոյց ծառայելու Շ.Մ.Հ.Մ.ի ժողովներուն եւ վարչութիւններուն կանոնադրելու համար իրենց ժողովական կեանքը:

**Շ.Մ.Հ.Մ.ի**  
**Կեդրոնական Վարչութիւն**

## **Ա.- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄ - ԱՌԺԱՄԵԱՅ ԴԻՒԱՆ**

**Յօդ. 246.-** Ժողովին բացումը կը կատարէ ժողովը հրավիրած վարչութեան ներկայացուցիչը, որ կը ձեռնարկէ նաև առժամեայ դիւանի ընտրութեան:

**Ծանօթ՝** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովի պարագային անհրաժեշտ չէ առժամեայ դիւանի կազմութիւնը:

**Յօդ. 247.-** Առժամեայ դիւանը կ'ունենայ ատենապետ մը եւ ատենապայիր մը, որոնք կ'ընտրուին առանձին-առանձին, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաջին քուէարկութիւն երբ պարզ մեծամասնութիւն չէ գոյացած, երկրորդ քուէարկութեան առաւելագոյն քուէ ստացողը ընտրուած կը նկատուի:

**Ծանօթ՝** Առժամեայ եւ մնայուն դիւաններուն մաս չեն կրնար կազմել խորհրդակցական ձայնով հրավիրուած ժողովականները, ժողովի հրավիրած վարչութեան եւ գերադաս վարչութիւններուն ներկայացուցիչներն ու անդամները:

**Յօդ. 248-** Մասնաճիւղի եւ մեկուսի շրջանի վարչութիւններու դիւանները կը վարեն մասնաճիւղի եւ մեկուսի շրջանի այն Անդամական Ընդհանուր Ժողովները, որոնց օրակարգին վրայ չեն գտնուիր վարչութեան հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն. ինչպէս նաև ներկայացուցիչներու կամ պատգամաւորներու ընտրութիւն: Հետեւաքար՝ առժամեայ եւ մնայուն դիւաններու ընտրութիւն տեղի չ'ունենար:

Շրջանային ներկայացուցչական ժողովին եւ Պատգամաւրական Ընդհանուր Ժողովին կը ձեռնարկուի առժամեայ եւ մնայուն դիւաններու ընտրութեան, ինչ ալ ըլլայ օրակարգը:

## **ԼԻԱԶՕՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՈՒԳՈՒՄ**

**Յօդ. 249.-** Ծրջանային Ներկայացուցչական ժողովին մասնակցող մասնաճիշտերու ներկայացուցիչները, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող Ծրջաններու եւ Սնկուսի Ծրջաններու պատգամաւորմերը պարտին ի ձեռին ունենալ զիրենք ընտրած ժողովներու դիւաններուն կողմէ տրուած լիազօրագիրներ:

Վարչութիւններու ներկայացուցիչները իրենց լիազօրագիրները կը ստանան իրենց վարչութիւններէն:

**Յօդ. 250-** Առժամեայ դիւանը կը կատարէ լիազօրագիրներու ստուգումը, ի հարկին լսելով լիազօրագիր ներկայացնող ժողովականին կամ ժողովի հրամիրած վարչութեան բացատրութիւնները, հաստատումները առարկութիւնները: Առժամեայ դիւանը լիազօրագիրներու ստուգումի աշխատանքին արդիւնքը կը զեկուցէ ժողովին:

**Ծանօթ՝** Ժողովը կրնայ լիազօրագիրներու ստուգումը յանձնել իր կողմէ ընտրուած յանձնախումքի մը, որ իր աշխատանքին արդիւնքը կը զեկուցէ առժամեայ դիւանին զիւատորութեամբ գումարուող ժողովին:

**Յօդ. 251.-** Ժողովականի մը լիազօրագիրին, մասնաճիւղի մը կամ շրջանի մը մասնակցութեան շուրջ ծագած հարցերուն յստակացումը կը կատարէ մնայուն դիւանով գումարուող ժողովը, իր առաջին նիստին:

## **ՄՆԱՅՈՒՆ ԴԻՒԱՅՆ**

**Յօդ. 252.-** Լիազօրագիրներու ստուգումէն ետք, առժամեայ դիւանը կը ձեռնարկէ մնայուն դիւանի ընտրութեամբ:

**Յօդ. 253.-** Մնայուն դիւանը կ'ունենայ՝

ա.- Մասնաճիւղի կամ Մեկուսի Ծրջանի Անդամական Ընդհանուր Ժողովներուն՝ ատենապետ մը եւ մէկ կամ երկու ատենադպիր:

բ.- Շրջանային Ներկայացուցչական եւ Պատգամատրական Ընդհանուր Ժողովներուն՝ երկու ատենապետ եւ երկու կամ չորս ատենադպիր:

**Յօդ. 254.**- Մնայուն դիւանի ընտրութիւնը կը կատարուի ձեռամբարձ կամ զաղտնի քուէարկութեամբ, ըստ ժողովի կամքին եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 255.**- Մնայուն դիւանը՝

ա.- Պաշտօնապէս կը հաստատէ ժողովին օրինակութիւնը, ժողովին վճիռին ենթարկելէ ետք ժողովականներու եւ շրջաններու մասնակցութեան հարցերու լուծումը:

բ.- Կը ձեռնարկէ խորհրդակցական ձայնով հրավիրելի ժողովականներու ընտրութեան, ձեռամբարձ քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

գ.- Կը ձեռնարկէ հետեւեալ յանձնախումբերու ընտրութեան՝

- Յարաբերական-արխիային,
- Հաշուեքնիշ-նախահաշիւ,
- Քանաձելի,
- Աշխատանքային յանձնախումբեր,
- Քուէախոյզ,
- Դատական (Եթէ դատական հարց կայ):

#### **Ծանօթ՝**

ա.- Խորհրդակցական ձայնով ժողովականները յանձնախումբերու անդամ կրնան ընտրուիլ, բայց ոչ՝ ժողովի հրավիրուած եւ գերադաս վարչութիւններու անդամները, ոչ ալ՝ վարչութեան ենթակայ յանձնախումբերու եւ խորհրդներու ներկայացուցիչները:

բ.- Յանձնախումբը կը բաղկանայ 3 կամ 5 հոգիէ, ըստ ժողովի կամքին:

գ.- Յանձնախումբի անդամներու ընտրութիւնը կը կատարուի մէկ առ մէկ, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաւելագոյն քուէ ստացողները ընտրուած կը նկատուին:

## **ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ**

**Յօդ. 256.**- Յարաբերական-արխիային յանձնախումբը կը քննէ հաշուեսու վարչութեան թղթածրաբները (ատենագորութիւն, նամակագրութիւն, շրջաբերական, անդամներու եւ գոյրե-

բու ցանկերը) եւ ժողովին կը ներկայացնէ զրաւոր գեկոյց՝ թրածրարներու վիճակին ու պահպանման եղանակին, ինչպէս նաև՝ վարչութեան տարած յարաքերական եւ գործելակերպին մասին:

**Յօդ. 257.-** Հաշուեքննիշ-նախահաշիւ յանձնախումբը կը քննէ հաշուետու վարչութեան հաշիւները, նկատի առնելով որդեգրուած հաշուապահական դրութիւնը, կը բաղդատէ քրւակուած եւ իրականացած պիտմէները եւ զրաւոր գեկուցում կը ներկայացնէ անոնց մասին:

Յանձնախումբը կը պատրաստէ նաև յաջորդ շրջանի պիտմէն, նկատի ունենալով ժողովի այն որոշումները, առաջարկները եւ թելադրանքները, որոնք նիւթականի կարիք ունին:

**Յօդ. 258.-** Բանաձեւի յանձնախումբը կը խմբագրէ հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ քուէարկելի գնահատումի բանաձեւը, նկատի ունենալով անոր ներկայացուցած տեղեկագիրները, անոնց շուրջ եղած հարցումներն ու լուսաբանութիւնները եւ գնահատական ու քննադատական արտայայտութիւնները: Գնահատումի արժեչափերն են.-

**Անքարարար, բաւարար, գոհացուցիչ, գնահատելի, յոյժ գնահատելի:**

Յանձնախումբը կը բանաձեւէ նաև ներկայացուած առաջարկները, նկատի ունենալով թեր ու դէմ կարծիքները:

**Յօդ. 259.-** Քուէախոյզ յանձնախումբը, գաղտնի քուէարկութեան միջոցին, կը կատարէ քուէաքուղթերու բաժանումը, հաւաքումը, ընթերցումը եւ արդիւնքներու արձանագրումը, դիւնին հսկողութեամբ:

**Յօդ. 260.-** Դատական յանձնախումբը կը քննէ դատական հարցերը, նկատի ունենալով թրածրարները եւ ի պահանջեալ հարկին լսելով կողմերուն լուսաբանութիւններն ու բացատրութիւնները:

**Ծանօթ՝** Դատական հարց կը նկատուին պատիմի մը դէմ բողոքը, պատիմի մը ներման կամ զայն բաւ համարելու դիմումները, որոնք ժողովին կ'ուղղուին պատժուած անդամին կամ պատժուած վարչութեան կողմէ միայն:

Ժողովին դիմանը կը ճշդէ դիմումին օրինաւորութիւնը՝ նկատի ունենալով կանոնագրային տրամադրութիւնները եւ սատ այն դիմումին ընթացք կու տայ կամ կը մերժէ ընթացք տալ եւ այս մասին կը գեկուցէ ժողովին: Ժողովին կը պատկանի դիմումի մը շուրջ ծագած հարցին լուծումը:

Դիմանը դատական յանձնախումբին կը փոխանցէ դատական բոլոր հարցերը՝ իրենց թղթաձրաբներով:

## **ԺՈՂՈՎԻ ԴԻՄԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

### **Յօդ. 261.- Ատենապետը՝**

ա.- Կը բանայ եւ կը վարէ նիստերը:

բ.- Զայն կու տայ ժողովականներուն:

գ.- Հարցերու քննութեան ընթացքին պարբերաբար կ'ամփոփէ արտայայտուած միտքերը, առանց իր կողմէ որեւէ արժեւորում կատարելու:

դ.- Հարցի մը քուէարկութեան հանգրուանին՝ բանաձեւուած առաջարկը կամ առաջարկները յստակ կերպով կը ներկայացընէ ժողովականներուն, սկսելով առաջին առաջարկէն:

ե.- Քուէարկութեան հանգրուանին ձայն չի կրնար տալ յաւելեալ լուսարանութիւններու կամ նոր առաջարկներու համար:

զ.- Կը կատարէ ձեռամբարձ քուներու ստուգումը, դիմանի միւս անդամներուն օժանդակութեամբ:

է.- Հարցի մը մասին ժողովականի իր կարծիքը յայտնելու կամ առաջարկ մը ներկայացնելու համար, ատենապետութիւնը կը յանձնէ միւս ատենապետին, իսկ չգոյութեան պարագային՝ ատենադպիրին:

ը.- Կը հսկէ ժողովի կանոնաւոր ընթացքին, նկատի ունենալով ժողովականներու արտայայտութիւններու պատշաճութիւնը, նիւթէն շեղումները, կրկնութիւնները եւ ի պահանջեալ հարկին կարգի կը հրաւիրէ զանոնք:

թ.- Հաշիւ կը պահանջէ բացակայող կամ ուշացող ժողովականներէն եւ կամ նախապէս արտօնութիւն կու տայ անոնց՝ բացակայելու, ուշանալու կամ ժողովասրահէն դուրս գալու:

ժ.- Կը փակէ նիստերը:

### **Յօդ. 262.- Ատենապայիրները՝**

ա.- Իւրաքանչիւր նիստին կը պահեն ներկայ-քացականերու տունարը:

թ.- Կարգով կ'արձանագրեն ձայն ուզող ժողովականներուն անունները եւ նոյն կարգով զանոնք կը փոխանցեն ատենապետին:

գ.- Կը պահեն նիստերու ատենագրութիւնները՝ արձանագրելով նիստերու կարգաբիւր, գումարման բուականը, ժամն ու վայրը, ներկաներուն, բանաւոր քացականներուն, քացականներուն թիւր, ժողովը վարող դիմանի անդամներուն անունները: Կ'արձանագրեն նաև ժողովականներու արտայայտած միտքերը, թեր ու դէմ կարծիքները, առաջարկները, ի պահանջեալ հարկին՝ անոնց անուններով, քուէարկուած որոշումները՝ իրենց արդիւնքներով, այսինքն՝ թեր ու դէմ եւ ձեռնպահ քուէններուն թիւր:

դ.- Յաջորդ նիստին կը կարդան նախորդ նիստին ատենագրութիւնը:

**Յօդ. 263.- Ժողովի վերջին նիստին ատենագրութիւնը կարելի չէ յետաձգել յաջորդ վարչութեան շրջանի աւարտին գումարող ժողովին:**

Վերջին նիստի ատենագրութեան վաւերացման համար ժողովը կ'որդեգրէ հետեւեալ ձեւերէն մէկը, ըստ յարմարութեան՝

ա.- Ժողովի աւարտին դիմանը նիստի կը հրաիրէ ժողովը՝ ատենագրութեան վաւերացման միակ օրակարգով, միայն ներկայ ժողովականներով:

թ.- Ժողովի աւարտին դիմանը կը ներկայացնէ վերջին նիստի սեւագրութիւնը՝ առ ի վաւերացում, ատենագրութեան շարահիւսութիւնը վերապահելով իրեն:

գ.- Վերջին նիստի ատենագրութեան վաւերացումը կը վստահուի դիմանին (կամ ալ՝ դիմանին եւ նորընտիր վարչութեան):

**Յօդ. 264.- Դիմանը իր մօտ կը կեղրոնացնէ եւ նորընտիր վարչութեան կը փոխանցէ ժողովին վերաբերող բոլոր քորածըրաբներն ու արձանագրութիւնները՝ տեղեկագիր, հաշուելշին, ատենագրութիւն, գեկուցագիր, եւայլն:**

**Յօդ. 265.-** Դիւանը կը պատրաստէ ժողովին կրողմէ ընտըր-  
ւած վարչականներու, ներկայացուցիչներու կամ պատգամա-  
տրներու հաստատագիրները եւ լիազօրագիրները՝ ուղղուած  
համապատասխան գերադաս վարչութիւններու եւ կամ ժողով-  
ներու՝

ա.- Մասնաճիւղի Վարչութեան ընտրութիւն՝ հաստատագիր  
ուղղուած Ծրջանային Վարչութեան:

բ.- Մասնաճիւղի ներկայացուցիչ՝ լիազօրագիր ուղղուած  
Ծրջանային Ներկայացուցչական ժողովին:

գ.- Մեկուսի Ծրջանի Վարչութիւն եւ Ծրջանային Վարչու-  
թիւն՝ հաստատագիր ուղղուած Կենդրոնական Վարչութեան:

դ.- Մեկուսի Ծրջանի եւ Ծրջանի պատգամատրներ՝ լիազօ-  
րագիր ուղղուած Պատգամատրական Ընդհանուր ժողովին:

**Յօդ. 266.-** Ժողովի փակումնեւ ետք, դիւանը նիստի կը հրա-  
լիրէ նորընտիր վարչութիւնը՝ կազմելու համար իր դիւանը:

Ժողովին դիւանը նորընտիր վարչութեան կը փոխանցէ իրեն  
մօս գտնուող ժողովին վերաբերող ամէն տեսակի արձանա-  
գրութիւն եւ թրածքար:

**Ծանօթ՝** Վարչութեան դիւանի կազմութեան անկարելիութեան պարագա-  
յին, նորընտիր վարչութեան ներկայ անդամները կը նշանակեն ներկայացու-  
ցիչ մը, որուն պարտականութիւնն է ամէնէն կարծ ժամանակամիջոցի մէջ  
նիստի հրալիրէ նորընտիր վարչութիւնը՝ կազմելու իր դիւանը:

Դիւանի կազմութեմնեւ ետք կը կատարուի փոխանցում՝ շրջանաւարտ եւ  
նորընտիր վարչութիւններու միջև:

## ԺՈՂՈՎԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**Յօդ. 267.-** Ժողովի օրինականութիւնը ճշդուած է **Հ.Ս.Ը.Ս.ի  
Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրով:**

ա.- Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով (Յօդ. 18)

բ.- Մեկուսի Անդամական Ժողով (Յօդ. 28)

գ.- Ծրջանային Ներկայացուցչական Ժողով (Յօդ. 31)

դ.- Պատգամատրական Ընդհանուր Ժողով (Յօդ. 49)

**Յօդ. 268.-** Որեւէ որոշումի քուէարկութեան համար, անհրա-  
ժշշաւ է ժողովի պարզ մեծամասնութեան ներկայութիւնը:

## **ՕՐԱԿԱՐԳ**

**Յօդ. 269.-** Ժողովի օրակարգը նախապէս ճշդրած կ'ըլլայ ժողովի հրամանակած վարչութեան կողմէ: Ժողովի դիանո կրնայ փոփոխութիւն մտցնել օրակարգի դասաւորումին մէջ: Եթէ ժողովական մը փոփոխութեան դէմ առարկէ եւ իր առարկութիւնը երկրորդուի, դիանո պարտաւոր է փոփոխութեան իր առաջարկը դնել ձեռամբարձ քուէարկութեան: Փոփոխութիւնը կը կատարուի ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Օրակարգի դասաւորման փոփոխութիւն կրնայ առաջարկել նաեւ ժողովական մը: Փոփոխութիւնը կը կատարուի, եթէ դիանո համաձայն է եւ անոր դէմ առարկող չկայ: Երկրորդուած առարկութեան պարագային, փոփոխութեան առաջարկը կը դրուի քուէարկութեան: Նոյնպէս, քուէարկութեան կը դրուի դիանին կողմէ մերժուած եւ սակայն երկրորդուած փոփոխութեան որեւէ առաջարկ:

**Յօդ. 270.-** Նոր վարչութեան, ներկայացուցիչներու եւ պատգամաւորներու ընտրութիւնները կը կազմն օրակարգի վերջին կէտը, զոր կարելի չէ առաջ բերել:

**Յօդ. 271.-** Օրակարգի վրայ նոր կէտ մը աւելցնելու առաջարկ կրնայ ներկայացուիլ դիանին կամ ժողովականի մը կողմէ: Յաւելումը կը կատարուի, երբ դիանին առաջարկը կամ ժողովականին երկրորդուած առաջարկը ձեռամբարձ քուէարկութեամբ կը ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

**Յօդ. 272.-** Ոչ մէկ ձեւով կարելի է օրակարգի վրայ աւելցնել պաշտօնավարող վարչութեան հաշուեքննութիւնը եւ նոր վարչութեան մը ընտրութիւնը, երբ այս կէտերը նախապէս չեն դրուած օրակարգի վրայ, այսինքն՝ երբ ժողովը վարչութեան հաշուետութեան եւ նոր վարչութեան ընտրութեան ժողովը մը չէ:

**Յօդ. 273.-** Ժողովականները իրաւունք չունին պաշտօնավարող վարչութեան գործունեութիւնը քննադատելու կամ անոր մասին քննադատական արտայայտութիւն ընելու այն ժողով-

ներուն, որոնց օրակարգին վրայ վարչութեան հաշուետուութեան կէտը չէ ճշդուած: Ժողովականները կրնան լուսաբանական հարցումներ ուղղել եւ ընել առաջարկներ ու թելադրանքներ:

## **ԺՈՂՈՎԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ ՉԱՅՆ ԱՌԵԼ ԵՒ ԽՕՍԻԼ**

**Յօդ. 274.-** Ժողովական մը խօսելու համար ձայն կ'ուզէ դիւանին եւ խօսիլ կը սկսի, երբ ատենապետը ձայն տայ իրեն՝ անմիջապէս կամ ըստ արձանագրութեան կարգին:

**Յօդ. 275.-** Խօսք առնող ժողովականը իր խօսքը կ'ուղղէ դիւանին:

**Յօդ. 276.-** Ոչ մէկ ժողովական կրնայ ընդմիջել խօսող ժողովական մը:

**Յօդ. 277.-** Երբ բազմաթիւ են ձայն ուզող ժողովականները, անոնց անունները կարգով կ'արձանագրուին դիւանին կողմէ: Երբ այլեւս ձայն ուզող չկայ, ատենապետը փակուած կը յայտարարէ ձայն ուզողներու ցանկը եւ նոր անուններ չեն արձանագրուիր: Դիւանը կրնայ, նոյն ձեւով, ձայն ուզողներու երկրորդ ցանկի մը կազմութեան առիթ տալ: Երրորդ ցանկի մը առիթ կը տրուի դիւանին կողմէ կամ ժողովականի մը երկրորդը տարուած եւ քուէարկուած առաջարկով: Նոյն ժողովականը կրնայ արձանագրուիլ իրաքանչիր ցանկին: Դիւանը կրնայ ժամանակի սահմանափակում կատարել. օրինակ՝ առաջին ցանկին համար խօսողներուն տրամադրելով 15 վայրկեան, երկրորդին՝ 7, երրորդին՝ 5:

## **ԽՕՍՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ**

**Յօդ. 278.-** Կան խօսքի հետեւեալ տեսակները .-

ա.- Լուսաբանական հարցում,

բ.- Ըստ էութեան արտայայտութիւն,

գ.- Առաջարկ,

դ.- Ըստ կարգի արտայայտութիւն:

## ՀՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

**Յօդ. 279.-** Լուսաբանական հարցում կ'ուղղուի հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ եւ հարցի մը քննութեան կամ առաջարկի մը առիթով:

ա.- Հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ եւ նախանքան անոր ըստ էութեան քննարկումը, լուսաբանական հարցում կ'ուղղուի տեղեկագիրին մէջ անհասկնալի կամ մութ մնացած կէտի մը պարզաբանումին կամ յաւելեալ լուսաբանութեան համար: Լուսաբանական հարցում մը չի կրնար գնահատանքի կամ քննադատական բնոյք եւ շեշտ ունենալ:

Հարցումներուն կարելի է պատասխանել, լսել ետք բոլոր հարցումները կամ հարցում առ հարցում:

Վարչութիւնը կրնայ դիւանէն կարծ դադար մը ուզել՝ պատասխաններուն շուրջ խորհրդակցելու համար:

բ.- Հարցի մը կամ ներկայացուած առաջարկի մը շուրջ լուսաբանական հարցում կ'ուղղուի, ըստ այնմ կարծիք տալու կամ քուէարկելու համար:

## ՀԱՏ ԷՌԻԹԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՆԱՅԻԹԻՒՆ

**Յօդ. 280.-** Վարչութեան գործունէութեան շուրջ ըստ էութեան արտայայտուող ժողովականը կրնայ հաշի պահանջել վարչութենէն, ընել իր հիմնաւորեալ գնահատանքը կամ քննադատութիւնը:

Վարչութիւնը կը պատասխանէ քննադատութիւններուն:

Բանաձեւի յանձնախումբը կը հետեւի ըստ էութեան արտայայտութիւններուն եւ վարչութեան պատասխաններուն, ըստ այնմ խմբագրելու համար հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ քուէարկութեան դրուելիք գնահատումի բանաձեւը:

## ԱՌԱՋԱՐԿ

**Յօդ. 281.-** Առաջարկ մը նկատի կ'առնուի եւ քննութեան կ'ենթարկուի միայն այն պարագային, երբ երկրորդուած է այլ ժողովականի մը կողմէ: Յանձնախումբի մը ներկայացուցած առաջարկը պէտք շունի երկրորդուելու:

**Յօդ. 282.-** Առաջարկի մը քննարկումի աւարտէն ետք, ատենապետը առիթ կու տայ այլ առաջարկի մը քննարկումին:

**Յօդ. 283.-** Առաջարկի մը քննութեան ընթացքին, ժողովական մը կրնայ ներկայացուած առաջարկին մէջ բարեփոխութիւն առաջարկել: Եթէ առաջարկը ներկայացուցած ժողովականը ընդունի բարեփոխութիւնը, առաջարկը կը քննուի բարեփոխութեան ձեւով: Եթէ չընդունի, բարեփոխութիւն առաջարկող ժողովականը բարեփոխութեան ենթարկած իր առաջարկը կրնայ իբրեւ նոր առաջարկ ներկայացնել: Նոյնպէս, եթք ժողովական մը համաձայն չէ բարեփոխութեան, որուն համաձայն գտնուած է առաջարկ բերողը, կրնայ սկզբնական առաջարկը ներկայացնել իբրեւ իրը:

### ՀԱՏ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

**Յօդ. 284.-** Ժողովական մը «ըստ կարգի» ձայն կ’ուզէ, դիւանին ուշադրութեան յանձնելու համար դիւանին կամ ժողովականի մը կողմէ կատարուած ժողովական շեղում մը կամ վրիպում մը, որպէսզի վերահաստատուի ժողովական կարգը:

«Ծատ կարգի» ձայն ուզողը նախապատուութիւն ունի: Եթք ժողովական մը ձայն կ’ուզէ «Ծատ կարգի» ըսկըով, ատենապետը կ’ընդմիջէ իր կամ ժողովականի մը խօսքը՝ լսելու համար «Ծատ կարգի» արտայայտուիլ ուզողը: Ատենապետը եթք իրաւացի գտնէ «Ծատ կարգի» մատնանշումը, ընթացք կու տայ անոր: Ի պահանջեալ հարկին՝ մատնանշումի մասին որոշում տալէ առաջ կը դիմէ դիւանի միւս անդամներուն կամ նոյնիսկ ժողովի կարծիքին:

### ՏՐՈՒՎԾ ՈՐՈՇՈՒՄԻ ՄԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

**Յօդ. 285.-** Ժողովին կողմէ տրուած որոշումի մը վերաբենութեան առաջարկը կրնայ ներկայացնել որոշումին ի նպաստ քուէարկած ժողովական մը միայն: Նոյնպէս՝ հարկ է, որ վերաննութեան առաջարկը երկրորդողը ըլլայ որոշումին ի նպաստ

քուէարկած ժողովական մը: Երբ այս ձեւով երկրորդուի վերաբննութեան առաջարկը, ձայն կը տրուի երկու թեր եւ երկու դէմ արտայայտուողներու, որոնք իրենց տեսակէտը կը պարզեն առանց նոր քննարկումներու:

Տրուած որոշումը վերաբննութեան կ'ենթարկուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Փոխարինող որոշումը կը տրուի ձայներու պարզ մեծամասնութեամբ եւ, հետեւարար, կը բեկանուի նախկին որոշումը: Երբ կարելի չ'ըլլար վերաբննուած որոշումը փոխարինող որոշում մը տալ ձայներու պարզ մեծամասնութեամբ, նախկին որոշումը կը մնայ ի օրու:

## **ՏՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄԻ ՄԸ ՔԵԿԱՆՈՒՄԸ**

**Յօդ. 286.-** Նոյն ձեւով՝ տրուած որոշումի մը բեկանումը կարելի է առաջարկել՝ առանց փոխարինող նոր որոշումի մը: Անիրածեցն է, որ բեկանումի առաջարկը ներկայացնեն եւ զայն երկրորդն որոշումին ի նպաստ քուէարկած երկու տարրեր ժողովականներ: Տրուած որոշումը կը բեկանուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

## **ՔՈՒԵԱՐԿՈՒԹԻՒՆ**

**Յօդ. 287.-** Ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէարկութեամբ:

- Քուամբարձ քուէարկութիւն,
- Գաղտնի քուէարկութիւն:

ա.- Զեռամբարձ քուէարկութիւն կը կատարուի ձեռքերու բարձրացումով, ընթացիկ հարցերու համար, ինչպէս՝ ատենագրութեան վաւերացում, օրակարգի փոփոխութիւն, յանձնախումբերու ընտրութիւն, բանաձեւի ընտրութիւն, ժողովական ընթացքին շուրջ ճշդում, եւայլն:

Ընդհանուր ձեւով որոշումները եւս կը տրուին ձեռամբարձ քուէարկութեամբ:

թ.- Գաղտնի քուէարկութիւն կը կատարուի դիւանին կողմէ բաժնուած թղթիկներուն վրայ կատարուած արձանագրութեամբ: Գաղտնի քուէարկութեան պարագաները ճշդուած են Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրով, ինչպէս՝ վարչութիւններու ընտրութիւն, ներկայացուցիչներու եւ պատգամաւորներու ընտրութիւն:

Ժողովական մը, սակայն, ձեռամբարձ քուէարկութեան փոխարէն կրնայ գաղտնի քուէարկութիւն առաջարկել: Առաջարկ երբ երկրորդուի, կը դրուի ձեռամբարձ քուէարկութեան եւ կը գործադրուի, երբ ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

## ԹԵՐ, ԴԷՄ, ԶԵՇՆՊԱՀ

**Յօդ. 288.**- Առաջարկի մը քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ թեր կամ դէմ քուէարկել եւ կամ շմասնակցիլ քրւարկութեան՝ մնալով ձեռնպահ:

Գաղտնի քուէարկութեան ատեն ձեռնպահ ժողովականը իր քուէարուղը ճերմակ կը վերադարձնէ:

Անձերու ընտրութեան ատեն, ժողովականը կը քուէարկէ ի նպաստ իր նախընտրած թեկնածուներուն, գաղտնի քուէարկութեան ատեն կը գրէ անոնց անունները կամ կը մնայ ձեռընպահ:

**Ծանօթ**՝ Երբ ձեռնպահ մնացողներու թիւը քուէարկողներու պարզ մեծամասնութիւնը կը կազմէ, քուէարկութեան դրուած առաջարկը կը վերաբննուի ժողովին կողմէ:

## ՄԵԾԱՍԱՍՆՈՒԹԻՒՆ

**Յօդ. 289.**- Ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէներու մեծամասնութեամբ:

**Յօդ. 290.**- Կայ երկու տեսակ մեծամասնութիւն՝ պարզ մեծամասնութիւն եւ երկու երրորդի մեծամասնութիւն:

Քուէներուն կէսէն մէկ կամ կոտորակ մը աւելին կը կազմէ պարզ մեծամասնութիւն:

Քուէներուն երկու երրորդը կը կազմէ երկու երրորդի մեծամասնութիւն եւ պարզ մեծամասնութիւն:

## **Ծանօթ՝**

ա.- Քուէներու ստուգման ատեն քուէարկողներու ընդհանուր թիւէն կը զեղչուին ձեռնպահ կամ ճերմակ քուէները եւ զեղչուած թիւին վրայ կը հաշվը ին պարզ կամ երկու երրորդի մեծամասնութիւնը (քաջի Յօդ. 288-ի ծանօթ քաժնէն):

բ.- Քուէարուուր մը, որ ընտրելի անձերու թիւէն աւելի անուն կը կրէ, ամբողջութեամբ չեղեալ կը համարովի եւ կը նկատովի ճերմակ քուտ:

Ձեռամբարձ քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ քուէարկել միայն մէկ անգամ թեր կամ դէմ, կամ մնալ ձեռնպահ: Անձերու ընտրութեան ատեն կրնայ քուէարկել այնքան անգամ, որքան ընտրելիներ կան, կամ մնալ ձեռնպահ:

գ.- Հնտրուած կը նկատովին կանոնագրային մեծամասնութեամբ քուէ ստացողները:

## **ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ**

**Յօդ. 291.**- Բոլոր ժողովականները պարտին յարգել ժողովական կանոնները:

**Յօդ. 292.**- Ատենապետը, երբ կը վարէ ժողովը, պարտի վեր մնալ ժողովի վէճերէն:

**Յօդ. 293.**- Ժողովական մը կրնայ ատենապետին թերացումը մատնանշել ժողովին: Կրկնութեան պարագային, կարելի է թերացող ատենապետին փոփոխութիւնը առաջարկել: Երբ առաջարկը երկրորդովի, խնդրոյ առարկայ ատենապետը իր տեղը կու տայ միւս ատենապետին (ատենապետի չգոյութեան պարագային՝ ատենադպիրին), որ առանց քննարկումի փոփոխութեան առաջարկը կը դնէ ձեռամբարձ քուէարկութեան: Երբ պարզ մեծամասնութեամբ ատենապետի փոփոխութիւն որոշուի, կ'ընտրուի նորը եւ նախկինը կը դառնայ պարզ ժողովական:

**Յօդ. 294.**- Ատենապետը իրաւունք ունի ժողովական մը կարգի հրաւիրելու՝ պահելու համար ժողովին կանոնաւոր ընթացքը եւ կարգը:

Ի պահանջեալ հարկին, ատենապետը կրնայ ժողովականի մը նկատմամբ ընել հետեւեալ կարգապահական տնօրինումները՝

ա.- Ազդարարութիւն,

բ.- Զայնի իրաւունքէ զրկում հարցի մը քննութեան լճաց-քին,

գ.- Զայնի իրաւունքէ զրկում որոշ ժամանակամիջոցի մը համար,

դ.- Զայնի իրաւունքէ զրկում մինչեւ նիստի աւարտը:

**Ծանօթ՝** Ենթակայ ժողովականը «Ըստ կարգի» ձայն առնելով՝ կրնայ բո-ղոքել եւ պահանջել, որ դիմուի ժողովի կարծիքին: Ժողովը իր կարծիքը կու տայ ձեռամբարձ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 295.-** Ատենապետին պահանջով կամ երկրորդուած առաջարկի մը հիմամբ, երկու երրորդի մեծամասնութեամբ՝ կարելի է ժողովէն հեռացնել անուղղայ կամ հակամիութեանական ժողովական մը:

## **ԺՈՂՈՎԻ ՓԱԿՈՒՄ**

**Յօդ. 296.-** Ատենապետը կը փակէ ժողովը, երբ աւարտած է օրակարգի վրայ գտնուող բոլոր հարցերուն քննութիւնը եւ, ընտրութեան պարագային՝ ընտրուած են վարչականներ, ներկայացուցիչներ կամ պատգամատրներ:

Երբ երկրորդուած առարկութիւն կայ ժողովը փակելու դիւանի կարգադրութեան դէմ, կը դիմուի ժողովին, որ ձեռամբարձ եւ պարզ մեծամասնութեամբ կը յայտնի իր կամքը:

Նոյնպէս, երբ, հակառակ դիւանի կարծիքին, երկրորդուած առաջարկ կայ փակելու ժողովը, նկատելով որ սպառած է օրակարգի բոլոր կէտերուն լուծումը՝ նոյն ձեւով կը դիմուի ժողովի կամքին:

## **ԺՈՂՈՎԻ ԱՌԿԱԽՈՒՄ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ**

**Յօդ. 297.-** Նուիրապետական կարգով գերադաս ժողով մը, գերադաս վարչութիւն մը կամ անոր լիազօր ներկայացուցիչը կրնայ առկախել եւ կամ լուծուած յայտարարել իրմէ ստորադաս ժողով մը, երբ որոշումը արդարացնող պատճառներ կամ:

## **Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Յօդ. 298.-** Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութիւնները գործադիր մարմիններ են, որոնք կը Վարեն միութեան գործերը եւ կը հսկեն իրենց ենթակայ կազմերու եւ ժողովներու գործունեութեան վրայ, իւրաքանչիւրը՝ կանոնագրով ճշդուած իր սահմաններուն մէջ:

**Յօդ. 299.-** Հ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ Վարչութիւնները՝ ընտրուած համապատասխան ժողովներու կողմէ՝

ա.- Մասնաճիւղի Վարչութիւն՝ ընտրուած Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ:

բ.- Սեկուսի Ծրջանի Վարչութիւն՝ ընտրուած Սեկուսի Ծրջանի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ:

գ.- Ծրջանային Վարչութիւն՝ ընտրուած Ծրջանային Ներկայացուցական Ժողովին կողմէ:

դ.- Կելլոնական Վարչութիւն՝ ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական Ընդհանուր Ժողովին կողմէ:

### **ՆՈՒՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԳ**

**Յօդ. 300.-** Հ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ նույրապետական կարգը՝

ա.- Մասնաճիւղի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է իր շրջանի Ծրջանային Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

բ.- Սեկուսի Ծրջանի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կելլոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

գ.- Ծրջանային Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կելլոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

**Յօդ. 301.-** ա.- Շրջանային Վարչութիւնը գերադաս է իր շրջանի որեւէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներ:

բ.- Կելքունական Վարչութիւնը գերադաս է Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովներ և Շրջանային Ներկայացուցական Ժողովներ:

**Յօդ. 302.-** Վարչութիւնները հաւաքարար հաշուետու են զիրենք ընտրող ժողովներուն, իրենց բոլոր գործերուն համար:

## **ՆՈՐԾՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԱԼԵՐԱՑՈՒՄ**

**Յօդ. 303.-** Նորընտիր վարչութիւնը իր պարտականութիւնները կը ստանձնէ ընտրութենէն անմիջապէս ետք:

**Յօդ. 304.-** Նորընտիր վարչութիւնը կը վաւերացուի իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կողմէ:

**Յօդ. 305.-** Նորընտիր վարչութեան վաւերացումը կը կատարուի հետեւեալ ձեռվ՝

ա.- Վարչութիւնը ընտրած ժողովին դիւանը իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կ'ուղղէ վարչական նոր կազմին օրինաւոր ընտրութիւնը հաստատող նամակ մը:

բ.- Նորընտիր վարչութիւնը, իր դիւանը կազմելէ անմիջապէս ետք, նամակով մը գերադաս վարչութեան կը տեղեկացնէ իր ընտրութեան արդիւնքը եւ իր դիւանին կազմը՝ խնդրելով անոր վաւերացումը:

գ.- Նորընտիր վարչութիւնը գերադաս վարչութեան կը փոխանցէ նաեւ զինք ընտրած ժողովին վերաբերող արձանագրութիւններուն եւ շրջանաւարտ վարչութեան տեղեկագիրներուն բոլոր պատճենները:

**Ծանօթ՝** Նորընտիր վարչութիւնը իր վաւերացումը խնդրող նամակը կ'ուղարկէ անմիջապէս՝ առանց սպասելու ժողովի դիւանի հաստատագիրին եւ միւս գրութիւններուն, որոնք կը փոխանցուին հետագային, երբ ի ձեռին ունենայ զանոնք:

## **ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ**

**Յօդ. 306.-** Վարչութիւնը կ’ունենայ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ:

Վարչութիւնը կ’ունենայ նաեւ փոխ ատենապետ, փոխ ատենադպիր, հաշուապահ եւ, ի պահանջեալ հարկիմ՝ գոյքապահ մը, որոնք մաս չեն կազմեր դիւանին:

Վարչութիւնը կրնայ ունենալ երկու ատենադպիր, աշխատանքի յստակ բաժանումով՝ ատենագրութիւն, շրջաբերական, նամակագրութիւն, օտար լեզուով գրութիւն, եւայլն:

Երկու ատենադպիրներն ալ մաս կը կազմեն դիւանին:

Մէկ ատենադպիրի պարագային, վարչութիւնը կրնայ ունենալ փոխ ատենադպիր մը, որ մաս չի կազմեր դիւանին:

Ատենապետին եւ ատենադպիրին բացակայութեան՝ փոխ ատենապետն ու փոխ ատենադպիրը կը կատարեն անոնց պաշտօնը եւ այս ձեռով կը մասնակցին դիւանի նիստին:

## **ԴԻՒԱՆԻ ՊԱՇՏՈՆՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ**

**Յօդ. 307.-** Դիւանը իրմէ անմիջապէս գերադաս վարչութեան կը փոխանցէ վաւերացուած ատենագրութիւնը եւ իր առաքած շրջաբերականնեն օրինակ մը, որպէսզի ան քայլ առ քայլ հետեւի վարչութեան գործունեութեան:

**Յօդ. 308.-** Դիւանը կը պատրաստէ վարչական նիստին օրակարգը:

### **ԱՏԵՆԱՊԵՏ**

**Յօդ. 309.-** Ատենապետը՝

ա.- Կը բանայ եւ կը վարէ վարչական նիստերը:

բ.- Զայն կու տայ խօսք ուզող վարչականներուն:

գ.- Կը պահէ ժողովին կարգն ու կանոնը:

դ.- Կը փակէ նիստը:

**Յօդ. 310.-** Ատենապետը վարչութեան ներկայացուցիչն է եւ իր այս հանգամանքով՝

ա.- Կը հետեւի վարչութեան որոշումներու գործադրութեան եւ, ի պահանջեալ հարկին, մղում կու տայ անոնց:

բ.- Ստիպողական պարագային, նիստէ դուրս կը կատարէ վարչական ընթացիկ կարգադրութիւններ, որոնց համար հաշիւ կու տայ վարչութեան:

գ.- Վարչութիւնը կը հրաիրէ բացառիկ նիստի:

դ.- Կը տանի վարչութեան յարաքերական գործը, բացի այն մարզերէն ներս, ուր վարչութիւնը ունի իր ներկայացուցիչը:

ե.- Կը ստորագրէ վարչական նիստերու վաերացուած ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

## ԱՏԵՆԱԴՊԻՐ(ՆԵՐ)

### Յօդ. 311- Ատենադպիրը՝

ա.- Կը պահէ նիստի ատենագրութիւնը: Ատենագրութեան մէջ կ'արձանագրէ նիստին կարգաթիւը, գումարման բուականն ու վայրը, ներկաներուն եւ բանաւոր բացականներուն անունները:

Ատենագրութեան մէջ կ'անցընէ նաեւ ստացուած նամակներուն բովանդակութիւնը՝ իրենց ստացման բուականով եւ կարգաթիւով, գրուելիք նամակներուն եւ շրջաքերականներուն բովանդակութիւնը, իրագործուած աշխատանքներուն զեկուցումը:

Նոյնպէս, հարցի մը ըննութեան ընթացքին արտայատուած միտքերը, տեսակետները, եղած առաջարկները եւ առարկութիւնները՝ իրենց հիմնաւորումներով եւ, ի պահանջեալ հարկին՝ առաջարկը ընող կամ առարկող վարչականներուն անուններով:

Յատակօրէն կ'արձանագրէ նաեւ առնուած որոշումները եւ յանձնուած պարտականութիւնները:

բ.- Յաջորդ նիստին ատենադպիրը պատրաստ վիճակի մէջ կը ներկայացնէ ատենագրութիւնը՝ առ ի վաւերացում:

գ.- Կը ստորագրէ վարչական նիստերու ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

**Ծանօթ՝** ա.- Նոյն նիստի աւարտին, վարչականներու փափաքով, ատենադպիրը կը ներկայացնէ նիստին ատենագրութեան սեւագրութիւնը կամ հոն տեղ գտած կէտերը:

թ.- Վարչութեան որոշումով՝ կը պահէ որոշումներու տեսրակը, ուր կ'արձանագրուին առնուած որոշումները՝ իրենց բուականներով եւ զանոնք գործադրողներու անուններով:

գ.- Վարչութեան վերաբերող բոլոր գրութիւնները կը դասաւորէ յասուկ բղրածրաբներու մէջ եւ կը պահէ վարչութեան փոխանցուած արխիւները:

դ.- Կը պատրաստէ վարչութեան շրջաբերականները, նամակները եւ զանազան գրութիւնները:

## ԳԱՆԶԱՊԱՀ

### Յօդ. 312.- Գանձապահը՝

ա.- Կը կատարէ վարչութեան գանձումներն ու վճարումները՝ համապատասխան ստացագիրով: Կը կատարէ նաև դրամատնային գործողութիւնները եւ տեղեակ կը պահէ վարչութիւնը:

բ.- Կը հետապնդէ գանձումները:

գ.- Օրը-օրին կ'արձանագրէ նիւթական գործառնութիւնները՝ հաշուական տոմարի մուտքի եւ ելքի բաժիններուն մէջ:

## ՀԱՇՈՒԱՊԱՀ

### Յօդ. 313.- Հաշուապահը՝

ա.- Կը հետեւի գանձապահի նիւթական գործառնութիւններուն եւ հաշուապահութեան:

բ.- Կանոնաւոր կերպով կը պահէ հաշուական տոմարները՝ ըստ որդեգրուած հաշուապահական դրութեան:

գ.- Պարբերաբար վարչութեան կը ներկայացնէ գեկուցում՝ նիւթական եւ տնտեսական կացութեան մասին:

## ԳՈՅՔԱՊԱՀ

### Յօդ. 314.- Գոյքապահը՝

ա.- Կը պահէ վարչութեան գոյքերը եւ անոնց լրիւ ցանկը:

բ.- Իր մօտ կը կեղրոնացնէ նաև վարչութեան ենթակայմիաւորներու ունեցած կարեւոր գոյքերուն ցանկը:

## ՊԱՇՏՈՆԵԱՅ ՔԱՐՏՈՒՂԱՐ

**Յօդ. 315.-** Կեղրոնական Վարչութիւնը կամ Շրջանային Վարչութիւնը կրնայ ունենալ պաշտօնեայ քարտուղար մը, որ կ'օգնէ ատենապետին եւ դիւանի աշխատանքներուն: Վարչութեան արտօնութեամբ, ան կրնայ մասնակցիլ վարչութեան եւ դիւանի նիստերուն, առանց ձայն ունենալու:

**Ծանօթ 1.-** Կեղրոնական Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին, առանց ձայն ունենալու:

**Ծանօթ 2.-** Շրջանային Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Շրջանային Ներկայացուցական Ժողովին, առանց ձայն ունենալու:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՆԻՍ

**Յօդ. 316.-** Վարչութիւնը կը գործէ՝ գումարելով հերթական նիստեր: Նիստերուն կը քննուին միութեան վերաբերող հարցեր, կը լսուին գեկուցումներ, կը կարդացուին ստացուած նամակներ եւ գրութիւններ, կը նշանակուին պատասխանատու անձեր եւ կազմեր, կ'առնուին որոշումներ, եւայլն:

**Յօդ. 317.-** Վարչութեան գործը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին, Սիութեան ընդհանուր ուղեգիծին, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական Ընդհանուր Ժողովին որոշումներուն, ինչպէս նաև՝ զինք ընտրած ժողովին, գերադաս ժողովին եւ գերադաս վարչութիւններուն որոշումներուն:

Վարչութեան գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրութիւններուն, ժողովական եւ վարչական կանոններուն, գերադաս ժողովներու եւ վարչութիւններու որոշումներուն:

Այլ մանաւանդ՝ վարչութեան գործը եւ գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի ոգիին:

**Յօդ. 318.-** Վարչութիւնը կ’որոշէ իր հերթական նիստերու գումարման օրը, ժամը, վայրը եւ տետղութիւնը:

**Յօդ. 319.-** Վարչականները կրնան դիւանի ներկայացուցած օրակարգին վրայ աւելցնել նոր կէտեր:

**Յօդ. 320.-** Օրակարգին մնայուն կէտերն են՝

- Նախորդ նիստի ատենազրութեան ընթերցում եւ վաւերացում,

- Ատենազրութենէն բխած հարցեր,
- Կատարուած աշխատանքներու շուրջ գեկուցումներ,
- Գերադաս վարչութիւններէ ստացուած նամակներ եւ շըրջաբերականներ:

**Յօդ. 321.-** Նիստը օրինաւոր է, եթիւ ներկայ է վարչականներուն մեծամասնութիւնը:

**Յօդ. 322.-** Վարչութեան որոշումները կ’առնուին ձայններու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 323.-** Առնուած որոշում մը կարելի է վերաբննութեան ենթարկել՝ ձայններու երկու երրորդով: Զայն փոխարինող որոշումը կ’առնուի պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 324.-** Ժողովական մը խօսք կ’առնէ ատենապետէն ձայն ստանալէ ետք: Այլ ժողովական մը չի կրնար ընդմիջում կատարել: Շեղումի պարագային, ատենապետը զայն կրնայ կարգի հրավիրել, իսկ ժողովական մը կրնայ «ըստ կարգի» յիշեցում կատարել:

## **ԳԻՒԱՆԻ ՆԻՍ**

**Յօդ. 325.-** Վարչութեան դիւանը կրնայ նիստ գումարել՝


ա.- Կանոնաւոր հերթականութեամբ,

բ.- Վարչականներու մեծամասնութեան բացակայութեան:

**Յօդ. 326.-** Դիւանի նիստերուն հիմնական որոշումներ կարելի չեն առնել: Դիւանի հերթական նիստերը կը ծառայեն պատրաստելու վարչական նիստերը: Այս նիստերուն կը կարդացուին ենթակայ կազմերու ատենազրութիւնները, գեկուցումները և զոռումի կ'ենթարկուին ստացուած գրութիւններն ու նամակները:



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ





# **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Էջ

Յառաջ Նահատակ

3

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ**

### **Շրագիր**

Անուն	7
Նպատակ	7
Միջոցներ	8

### **Կանոնագիր**

Անդամակցութիւն	11
Ղրօշակներ	12
Ժողովներ եւ Վարչութիւններ	13
Մասնաճիւղ	13
Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով	14
Շրջան	15
Մեկոսի Շրջանի Անդամական ժողով	15
Շրջանային Ներկայացուցչական ժողով	16
Պատգանաւորական Ընդհանուր ժողով	19
Մասնաճիւղի Վարչութիւն	22
Մեկոսի Շրջանի Վարչութիւն	24
Շրջանային Վարչութիւն	26
Կեդրոնական Վարչութիւն	29
Ընդհանուր Կանոններ	31
Ընտրական	32
Նիւթական Աղբիւրներ	32
Հաշուական	33
Սարգական	33

Գոյքեր Եւ Կալուածներ	33
Կարգապահական	33

## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

### **Ծրագիր**

Անուն	41
Նպատակ	41
Միջոցներ	42

### **Կանոնագիր**

Անդամակցութիւն	45
Բաժանմունքներ	46
Կարգեր	47
Խոստում, Երդում, Դաւանանք, Նշանաբան, Նշանակ	48
Դրոշակներ	50
Վարչական Բաժանմունքներ	51
Մարմիններ	51
ա) Հրօանային Սկառտական Խորհուրդ	51
բ) Մեկուսի Հրօանի Սկառտական Խորհուրդ	54
գ) Մասնածիւղի Սկառտական Խորհուրդ	54
Ժողովներ	54
ա) Դանա - Հ.Ա.Ը.Ս.ական խմբապետական համագումար	54
բ) Մասնածիւղերու խմբապետներու ընդհանուր ժողով	55
Պաշտօններ	56
ա) Հրօանային ընդհանուր խմբապետ / խմբապետուիի	56
բ) Հրօանային խմբապետ Եւ խմբապետուիի	58
գ) Մասնածիւղի խմբապետ/ խմբապետուիի	59
դ) Միաւորի խմբապետ Եւ խմբապետուիի	59
Աստիճանաւորական կազմ	59
Շարքերու Կազմակերպուն	61
Կարգապահական - Պատժական	64
Տարագներ Եւ Գոյքեր	67
Ընդհանուր Կանոններ	67

# **ՅԱՄԱ - Յ.Մ.Ը.Ս.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ**

## **Նպատակ**

Մասնակցութեան պայմաններ	71
Պատուիրակութիւններու կազմութիւն	72
Բանակումի կազմակերպչական դրութիւն	72
Սկաուտներու բաժաննունքներ	74
Բանակավայր	74
Ընդհանուր կանոններ	74

## **ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **Ժողովական կանոններ**

Ժողովի բացում - Առժամեայ դիւան	79
Լիազօրագիրներու ստուգում	80
Մանյուն դիւան	80
Յանձնախումբեր	81
Ժողովի դիւանի պարտաւորութիւնները	83
Ժողովի օրինականութիւն	85
Օրակարգ	86
Ժողովական ընթացք՝ ձայն առնել եւ խօսիլ	87
Խօսքի տեսակներ	87
ա) Լուսաբանական Դարցում	88
բ) Ըստ էութեան արտայայտութիւն	88
գ) Առաջարկ	88
դ) Ըստ կարգի արտայայտութիւն	89
Տրուած որոշումի մը վերաբննութիւնը	89
Տրուած որոշումի մը բեկանումը	90
Քուէրկութիւն	90
Թեր, դէմ, ձեռնպահ	91
Սեծամասնութիւն	91
Ժողովական կարգապահութիւն	92
Ժողովի փակում	93
Ժողովի առկախում եւ լուծում	93

## **Վարչական կանոններ**

Վարչութիւններ	94
Նուիրապետական կարգ	94
Նորընտիր վարչութեան վաւերացում	95
Վարչութեան դիւան	96
Դիւանի պաշտօնն ու պարտականութիւնը	96
Ատենապետ	96
Ատենադպիր	97
Գանձապահ	98
Հաշուապահ	98
Գոյքապահ	98
Պաշտօնեայ քարտուղար	99
Վարչական նիստ	99
Դիւանի նիստ	101
Հ.Ս.Ը.Ս.-ի կառոյցը	103

